

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Մաքրոնի Ծանր Մեղադրանքները Ռուսաստանի Հասցեին

Նախագահ Էմանուել Մաքրոնը Ֆրանսական հեռատեսիլին սփռուած հարցազրոյցի մը ընթացքին բաւական խիստ եւ ծանր վերագրումներ կատարեց Ռուսաստանի հասցեին, այս վերջինս մեղադրելով Հայաստանի դէմ վերջին սեպտեմբերեան յարձակումը հրահրելու մէջ:

«Ի՞նչ տեղի կ'ունենար սահմանի վերջին երկու տարիներուն: 5000 ռուս զինուորականներ ենթադրաբար այնտեղ են սահմանը երաշխաւորելու համար, բայց ռուսերը օգտագործած են այս հակամարտութիւնը, որ դարեւոյ պատմութիւն ունի ու Ատրպէյճանի խաղը խաղցած են թուրքոյ հետ Հայաստանը թուլացնելու համար», ըսած է Մաքրոնը:

Ֆրանսայի նախագահի նման յայտարարութիւնը բաւականին անակնկալ էր ու հասցեագրուած: Բնականաբար ան նման եղանակով ու բաց կերպով պիտի չխօսէր եթէ իր տրամադրութեան տակ չունենար որոշ տուեալներ, որոնց վրայ հիմնուելով է որ, այս զգայուն հարցը կը դարձնէր հրապարակային քննարկման առարկայ:

Մաքրոնի մեղադրանքները միակը չեն, որ վերջին օրերուն կը հնչեն Ֆրանսայի մայրաքաղաքէն: Մի քանի օր առաջ, նոյնանման միտք արտայայտեց նաեւ արտաքին գործոց նախարար Բերթրին Քոլոնան, ըսելով թէ, Հայաստանի միջազգայնօրէն ճանչցուած տարածքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները բացայայտեցին Ռուսիոյ անկարողութիւնը՝ հանդէս գալու որպէս իրաւարար, ինչին ան բացառիկութեան կարգով կը յաւակնէր 2020 թուականի պատերազմէն յետոյ:

Մաքրոն իր նոյն ելոյթին մէջ նաեւ ըսաւ որ, Հայաստանը երկիր մըն է, որուն հետ Ֆրանսան եզակի կապ ունի: «Մենք այդ երկրին կողքին ենք եւ առանձին պիտի չծագենք Հայերը», հարցազրոյցի ընթացքին շեշտեց ան:

Ֆրանսայի նախագահի այս յայտարարութիւնները արժանացան Ատրպէյճանի ու Ռուսաստանի հակազդեցութեան: Պաքուի մէջ Ֆրանսան ամբաստանեցին կողմնակալութեան մէջ, իսկ նախագահ Փոլթին պատասխանելով Մաքրոնին ըսաւ թէ անոնք, անպատշաճ են եւ անընդունելի: «Ես այդ մասին պիտի խօսիմ Մաքրոնին հետ», աւելցուց ան:

Նախագահ Մաքրոն Ռուսաստանը Կը Մեղադրէ Հայաստանի Ու Ատրպէյճանի Միջեւ Վերջին Բախումները Սադրելու Մէջ Փութին. «Այդ Յայտարարութիւնները Անպատշաճ են Եւ Անընդունելի»

Ֆրանսացի գրող Սիլվէն Թեստոն, որ նոր վերադարձած է Հայաստանէն, «Le Figaro» ամսագրին մէջ Հայաստանի վրայ Ատրպէյճանի վերջին յարձակումներուն մասին իր հրապարակմամբ մարտահրաւէր նետած է Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնին:

Մաքրոն պատասխանած է գրողին՝ ըսելով. «Հայաստանը երկիր մըն է, որուն հետ մենք եզակի կապ ունինք: Մենք այդ երկրին կողքին ենք: Հայաստանը երկու տարի առաջ Ատրպէյճանի հետ պատերազմէն պարտութիւն կրեց: Սեպտեմբերին Ատրպէյճանը նոր յարձակման անցաւ: Վարչապետ Փաշինեան եկաւ Փարիզ, մենք յստակ դատապարտեցինք (յարձակումը)»: Ֆրանսան Փրակի գագաթաժողովին թույլատրեց հրահրել Ատրպէյճանի եւ Հայաստանի դեկալարները»:

Մաքրոն Ռուսիան մեղադրած է Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ վերջին բախումները սադրելու մէջ՝ որպէս Կովկասի մէջ իրավիճակը ապակայունացնելու ջանքերու մաս: «Ի՞նչ տեղի կ'ունենար սահմանին վերջին երկու տարիներուն: 5000 ռուս զինուորականներ ենթադրաբար այնտեղ են սահմանը երաշխաւորելու համար, բայց ռուսերը օգտագործած են այս հակամարտութիւնը, որ դարեւոյ պատմութիւն ունի ու Ատրպէյճանի խաղը խաղցած են թուրքոյ հետ Հայաստանը թուլացնելու համար», ըսած է Մաքրոնը:



Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոն

մար, բայց ռուսերը օգտագործած են այս հակամարտութիւնը, որ դարեւոյ պատմութիւն ունի ու Ատրպէյճանի խաղը խաղցած են թուրքոյ հետ Հայաստանը թուլացնելու համար», ըսած է Մաքրոնը:

«Կը տեսնէք ինչ կը կատարուի: Ռուսիան ջանք կը գործադրէ ապակայունացնելու: Ան կը փափաքի խառնակ վիճակ ստեղծել Կովկասի մէջ եւ ապակայունացնել բոլորս», ըսած է Ֆրանսայի նախագահը:


գահը: Էմանուել Մաքրոն հայ-ատրպէյճանական հակամարտութեան մէջ Ռուսիան մեղադրած է «ապակայունացման» համար: «Մենք պիտի չթողնենք Հայաստանը, պիտի չլքենք հայերը», իր խօսքը ամփոփած է նախագահը:

Աւելի վաղ Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քեթրին Քոլոնան յայտնած էր, որ Սեպտեմբերին

Ֆրենք Փալոն Զի Բացառել Անվտանգային Ոլորտին Մէջ ԱՄՆ-ի Օգնութիւնը

Ամերիկայէն Հայաստանի Հանրապետութեան հետազոտողները կ'ըսեն, որ անվտանգային հարցերու մէջ ԱՄՆ Հայաստանի մէջ աշխոյժ չէ եղած, բայց հիմա իրավիճակը կը փոխուի:

«Իմ նպատակներէս մէկը այն է, որ մենք քիչ մը աւելի մեծ դեր կրնանք խաղալ, ոչ միայն Հայաստանի, այլեւ Արցախի անվտանգութեան տիրոջ թիւն մէջ, եւ, ես կը կարծեմ, որ մտահոգիչ է, որ ռուս խաղաղապահները Արցախի մէջ նոյնպէս վտանգուած են ինչ-որ առումով, որովհետեւ Ռուսիան կրնայ որոշել, որ այլեւս չի փափաքիր այնտեղ խաղաղապահ գործունենալ», ըսած է Փալոնը՝ չբացառելով նաեւ անվտանգային ոլորտին մէջ Միացեալ Նահանգներու օգնութիւնը. «Բացառապէս չեմ բացառեր: Կը կարծեմ, որ չափազանց կարեւոր է, որ այս պահուն մենք սկսինք դեր խաղալ, եւ միշտ համարած եմ, որ շատ լաւ պիտի ըլլար Հայաստանի համար, որ Հայաստանը Եւրոմիութեան մաս ըլլար եւ աւելի սերտ շփում ունենար ՆԱՏՕ-ի հետ: Կը կարծեմ, որ շատ լաւ հնարաւորութիւն է հիմա, թերեւս անհրաժեշտութիւն է այդ



ԱՄՆ գոնկրեսական Ֆրենք Փալոն

ուղղութեամբ նայելու այս պահուն Հայաստանի համար, որովհետեւ ռուսական անվտանգութեան պայմանադաշինքը, կարծես թէ Հայաստանը չի ընդգրկեր»:

Փալոն ընդգծած է, որ անվտանգային առումով Հայաստանի մէջ աշխոյժ չեն եղած, քանի որ Հայաստանի մէջ ռուսական ռազմախարիսի կապ եւ Հայաստանը կ'անդամակցի ՀԱՊԿ-ին, որու կազմին մէջ է նաեւ Ռուսիան:

«Ազատութեան Տուն». «Հայաստանի Մէջ Համացանցը Ազատ է»

«Ազատութեան Տունը» (Freedom House) հրապարակած է Համացանցի ազատութեան 2022 թուականի զեկոյցը, որուն համաձայն, Հայաստանը հռչակուած է «ազատ երկիր»:

Անցած տարիներու ընթացքին Հայաստանը, որպէս կանոն, եղած է «ազատ երկիրներ» ու ցանկին մէջ: Բացառութիւնը 2017 թուականն է, երբ 2016-ի համեմատութեամբ արձանագրուելով է նահանջ եւ Հայաստանը բնորոշուած է որպէս «մասամբ ազատ»: Անկէ յետոյ Հայաստանի մէջ համացանցի վիճակը մշտապէս ազատ համարուած է: Այդ անուանակարգին մէջ տեղ գտնելու համար երկիրներուն միաւորներ կը տրուին՝ 100-էն 70:

Հայաստանը այս նոր զեկոյցին մէջ ստացած է ընդհանուր 74 միաւոր եւ «ազատ երկիր» հռչակուած է: Մտաչելութիւնը՝ 20 միաւոր, բովանդակութեան սահմանափակումը՝ 28 եւ օգտատիրոջ իրաւունքներու ոտնահարումը՝ 26:

Նշենք, որ Հայաստանը տարածաշրջանին մէջ ընդամենը 4 միաւոր գիջած է հարեւան վրաստանին:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանն Ու Ատրպեյճանը Պատրաստուում են 2 Ամսից Խաղաղութեան Պայմանագիր Կնքել

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Առեւի քան 30 տարուայ համարտուութիւնից յետոյ Հայաստանն ու Ատրպեյճանը պատրաստուում են 2 ամսից խաղաղութեան պայմանագիր կնքել:

Մինչ այս պահը ինչ էլ յայտնի կնքուելիք պայմանագրի սկզբունքների մասին եւ որքանով են կողմերի հրապարակային մօտեցումները համընկնում:

Նախ Հայաստանն ամենաբարձր մակարդակով յայտարարել է, որ պատրաստ է Ատրպեյճանի հետ կնքել խաղաղութեան պայմանագիր, եթէ Ատրպեյճանը ճանաչի Հայաստանի 29 հազար 800 քառակուսի քմ. տարածքը եւ արդեօք այս պայմանաւորութեանը կը հետեւի ատրպեյճանական զինուժի դուրսբերումը Հայաստանի օկուպացուած տարածքներից:

Հայաստանը նաեւ պնդում է, որ խաղաղութեան պայմանագիրը եւ դեյլիմիտիացան փոխկախակցուած են եւ պէտք է միաժամանակ արուեսն, սակայն առ այսօր պարզ է, թէ ինչ քարտէզներով է իրականացուելու դեյլիմիտացիան: Երեւանի ու Պաքուի մօտեցումները այս հարցում եւս տարբեր են:

Անվտանգութեան խորհրդի քարտուղարը շեշտում է՝ ըստ հուլիսի Հայաստանի եւ Ատրպեյճանի սահմանը արդէն իսկ դեյլիմիտացուել է 1929 թուականին, եւ մնում է, որ կողմերը փոխհամաձայնութեան գան այդ իրողութեան շուրջ. «Կարող եմ ասել, որ Հայաստանի եւ Ատրպեյճանի սահմանը դեյլիմիտացիայի ենթարկուել է 1929 թուականին: Այստեղ մնում է, որ մենք փոխադարձ համաձայնութեան գանք՝ ընդունենք այդ սահմանը, ապահովազենք Հայաստանի 29 հազար 800 քառակուսի քմ. տարածքը եւ առաջ շարժուենք»:

Առեւի վաղ՝ այս տարուայ Ապրիլին, Ատրպեյճանի նախագահն ասել էր, թէ սահմանները որոշելու ժամանակ պէտք է օգտագործել

տարբեր քարտէզներ. - «Տարբեր քարտէզներ կան, կայ 1918 թուականի քարտէզ, երբ Երեւանը Ատրպեյճանի մաս է, կայ 1920 թուականի Նոյեմբերի քարտէզը, երբ Զանգեզուրը Ատրպեյճանի մաս է ... Այսպիսով մեր դիրքորոշումն այն է, որ պէտք է օգտագործել բոլոր այն քարտէզները որոնք սկսում են 1918 թուականից եւ նոյնիսկ առեւի վաղ շրջանից»:

Պաշտօնական Երեւանը պարբերաբար պնդում է՝ Ատրպեյճանի կողմից անդադար բարձրաձայնուող «Զանգեզուրի միջանցքի» հարցը չի կարող քննարկման առարկայ դառնալ:

«Որեւէ հարց մենք չենք քննարկելու, որ ունի միջանցքային տրամաբանութիւն: Եւ մենք շարունակում ենք պնդել, եւ ամբողջ օրակարգը դրա շուրջ է, որ ապաշրջափակում պէտք է տեղի ունենայ սովորականութեան սկզբունքի հիման վրայ եւ փոխադարձութեան: Այսինքն՝ ինչպիսի ապաշրջափակում տեղի ունենայ Ատրպեյճանում, նոյն տրամաբանութեամբ ապաշրջափակում տեղի կ'ունենայ Հայաստանում»:

Ատրպեյճանը մինչդեռ շարունակում է պնդել, թէ հասնելու է իր նպատակին եւ Զանգեզուրով միջանցք ստանալու է:

Պրահայում կայացած քառակողմ հանդիպումից յետոյ Ալիեւը «Զանգեզուրի միջանցք» արտայայտութիւնը չէր օգտագործել, բայց ասել էր, թէ Հայաստանը չի ուզում ինքնակամ դէպի Նախիջե-

լան աւտոճանապարհ տալ. - «Ցաւօք, այսօր էլ, երբ ես դիմեցի Հայաստանի վարչապետին, թէ ի վերջոյ տուէք մեզ աւտոճանապարհային ճանապարհի երթուղին, պատասխան չստացայ: Սա արդէն նոյնիսկ ծիծաղելի չէ, քանի որ բոլորը գիտեն որտեղով պէտք է անցնի երկաթուղին ու աւտոճանապարհը: Անհասկանալի է, թէ ինչու ինքնակամ չեն համաձայնում մեզ անցում տրամադրել դէպի Նախիջեւան: Սա, իհարկէ, ստանձնած պարտաւորութիւնների կոպիտ խախտում է, սակայն մենք համբերում ենք, զսպասածութիւն ենք ցուցաբերում: Ես վստահ եմ, որ դրան էլ կը հասնենք, որքան շուտ, այնքան լաւ»:

Հաղորդակցութիւնները ապաշրջափակելու շուրջ պաշտօնական Երեւան ու Պաքուն այսօր եւս յայտարարութիւններ են արել՝ կրկին ի ցոյց դնելով հակասութիւնները: Նախ վարչապետ Նիկոլ Փաշինեանը թուիթերում գրեց, որ Արեւելեան Ատրպեյճանի եւ Նախիջեւանի միջեւ կապն ապահովելու նպատակով հայ-ատրպեյճանական սահմանին 3 անցակէտեր բացելու վերաբերեալ որոշման նախագիծը մի քանի ամիս է, պաշտօնապէս շրջանառուում է, եւ Երեւանը սպասում է Ատրպեյճանի դրական արձագանքին:

Պաշտօնական Պաքուն արձագանքնեց՝ այս առաջարկն անիրատեսական է ու կեղծ, եւ դարձեալ ճանապարհ պահանջեց այսպէս կոչուած Զանգեզուրի միջանցքով: «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»

Երեւան-Ստեփանակերտ. Հակիրճ, Բայց Խօսու՞մ

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը Հոկտեմբերի 16-ին կառավարութիւնում հիւրընկալել է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի գլխավորած պատուիրակութեանը: Կառավարութեան տարածած հաղորդագրութիւնը բաւականին հակիրճ է, եւ դրանով իսկ թերեւս բաւականին խօսու՞մ. «Անդրադարձ է կատարուել Ատրպեյճանի հետ տարրուող քննարկումների ընթացքին: Վարչապետը նշել է, որ ինչպէս մինչ այժմ, այնպէս էլ յետագայում Արցախի գործընկերներին տրամադրուելու է քննարկուածների մասին ողջ տեղեկատուութիւնը»: Հակիրճ հաղորդագրութիւնը խօսու՞մ է այն իմաստով, որ բուն հանդիպումը թերեւս ունեցել է յազեցած բովանդակութիւն եւ համառօտ հաղորդագրութեամբ ընդգծուած է արարողակարգի «աւելորդութիւնը»:

Հանդիպման ըստ ամենայնի առաջնային տեղ է զբաղեցրել այն հարցը, որը ընդհանուր առմամբ հնչում է Հայաստանի եւ Արցախի հասարակական-քաղաքական լայն դիսկուրսում՝ ինչ պէտք է անեն Հայաստանն ու Արցախը ստեղծուած իրավիճակում: Իսկ ստեղծուած իրողութիւնը, եթէ բնորոշենք համառօտ, գործնականում հետեւեալն է՝ բաւականին լայն թափ է ստացել ռեզիդում ԱՄՆ ու Ռուսաստանի դիմակայութեան եւ մրցակցութեան դիւանագիտական-քաղաքական ընթացքը: Միաժամանակ, բաւականին բազմիմաստակնարկներ պարունակող հնչեղ յայ-

տարարութիւններով խաղի մէջ լինելու յայտ է ներկայացրել Ֆրանսան, որ արտացոլուեց Պրահայում: Պրահայից յետոյ Ռուսաստանը Աստանայում յստակ ցոյց տուեց, որ ամենեւին չունի դիրքեր գիջելու մտադրութիւն: Այդ իրավիճակում հայկական կողմի համար առանցքային է նախ այն, որ դիւանագիտական-քաղաքական պայքարը չվերաճի ռազմական դիմակայութեան: Այստեղ անշուշտ Հայաստանից կախուածը շատ չէ, սակայն Հայաստանը պէտք է ձգտի առաւելագոյն անել իրենից կախուածում արդիւնաւետութեան համար:

Յաջողուել հենց հարցն է, թէ Հայաստանն ինչ պէտք է անի դրա համար: Սա բաւականին բարդ հարց է, քանի որ արդէն առնչուած է արցախեան հարցում, հայ-ատրպեյճանական հակամարտութիւնում դիրքաւորման եւ դիրքորոշումների խնդրին: Այստեղ կայ իրողութեան օպերատիւ կառավարման հարցը, միաժամանակ երկարաժամկէտ քաղաքականութեան մշակ-

ման, ինչը բարդանում է նրանով, որ այդ աշխատանքը պէտք է իրականացուի խիստ անկանխատեսելի եւ անորոշ միջազգային իրավիճակում, երբ որեւէ երկարաժամկէտ պլանաւորում եւ դրան ուղղուած տակտիկական, ընթացիկ աշխատանք կարող է որեւէ միջնաժամկէտ եւ անգամ կարճաժամկէտ հեռանկարում դառնալ ժամանակավրէպ: Սրանից արուող պարզ եզրակացութիւնն այն է, որ հայկական կողմին, տուեալ դէպքում Երեւան-Ստեփանակերտ տանդեմին հարկ է հասնել աշխատանքի բաժանման արդիւնաւետ, եւ այդ միջոցով՝ ճկունութեան առաւելագոյն աստիճանի: Հիմքում սակայն, առայժմ թերեւս չկայ այլ բան, քան Նոյեմբերի 9-ի փաստաթուղթը, որը լինելով ցաւազին պարտութեան հետեւանք, այդուհանդերձ ներկայումս հայկական կողմի համար ոտքի ըստ հուլիսեան միակ տեղն է, որի ներքոյ կայ նաեւ Ալիեւի ստորագրութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐՈ՞
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԼՈՒՐԵՐ

Ալէն Սիմոնեանի Տուեալներով Ատրպէյճանը Վերջին Յարձակման Պատճառով 431 Զոհ Ունի

Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի տուեալներով Հայաստանի դէմ ատրպէյճանական վերջին յարձակման պատճառով Ատրպէյճանի գինուած ուժերու զոհերուն թիւը 431 է: Արցախի պատուիրակութեան հետ հանդիպումէն յետոյ լրագրողներու հետ ձեպագրուցին այս մասին ըսաւ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը:



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

«Այո՛, մենք ունեցանք զոհեր, մեր հակառակորդը ունեցաւ աւելի շատ զոհեր: Այո՛, Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է պաշտպանենք՝ թէկուզ զոհուելով: Կարծում եմ, Ատրպէյճանի յարձակումը մի քանի նպատակ է ունեցել՝ առաւելագոյն եւ նուազագոյն: Առաւելագոյն նպատակը եղել է հնարաւորինս շատ տարածքային առաւելութիւն ունենալը, իսկ նուազագոյնը՝ ստուգել, տեսնել հայկական բանակի մարտունակութիւնը: Այն փաստը, որ Ատրպէյճանը հէնց առաջին ժամերին յայտարարեց, որ 70 զոհ ունի, խօսում է նրա մասին, որ իրենց զոհերի թիւը շատ աւելի շատ է: Իմ տուեալներով՝ նրանց զոհերի քանակը 431 է», ըսաւ Սիմոնեանը:

Քին եւ ինչպէս կը փափաքին կը բանակցեն Արցախի հետ՝ Ալէն Սիմոնեան նշեց, որ մինչ օրս եղած են շատ հարցեր, որ Ատրպէյճանը քննարկած է եւ բանակցած է Արցախի իշխանութիւններուն հետ:

«Միեւնոյն ժամանակ, Ատրպէյճանը գտնուում է մշտական կայի մէջ Արցախի օրինական իշխանութիւնների հետ շատ հարցերում: Նոյնիսկ լինում են դէպքեր, որ Արցախի իշխանութիւնները տեղեկութեան առումով աւելի շատ են տեղեկացուած լինում, քան մենք: Բնական է, որ հարեան երկրի ղեկավարութիւնը պէտք է այլ ձեւակերպումներ տայ՝ Ստեփանակերտի տեղը ատրպէյճանական անուանում ասի եւ այլն, եւ այլն: Ես խնդրում եմ դիտարկել դա այդ տրամաբանութեան մէջ: Միեւնոյն ժամանակ, յիշենք բանակցային գործընթացը՝ չի աւարտուել, որեւէ փաստաթուղթ, որի վրայ կարող ենք յղում անել, գոյութիւն չունի: Բնական է, ամէն մի կողմ իր տեսլականը եւ իր պատկերացումը ներկայացնում է», եզրափակեց Սիմոնեանը:

Հայաստանի իշխանութիւնները մշտապէս առաջարկած են, որ Արցախը պէտք է ներգրաւուած ըլլայ եւ ներգրաւուած է բոլոր քննարկումներու եւ հարցերուն մէջ, ըսաւ Ալէն Սիմոնեանը:

«Մենք Արցախին առաջարկում ենք այն, ինչ-որ առաջարկել ենք մշտապէս՝ Արցախը ինքնուրոյն պէտք է ներգրաւուած լինի եւ ներգրաւուած է բոլոր քննարկումների ու հարցերի մէջ: Հայաստանի Հանրապետութիւնը միեւնոյն ժամանակ պէտք է առաւելագոյն ներգրաւուած լինի այդ խօսակցութիւնների մէջ», ըսաւ Սիմոնեանը:

Արձագանգելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի այն յայտարարութեան, թէ երբ կը փափա-

Պայմանագրային Ձիճուորներու Աշխատավարձը Ըստ Էուրեան Պիտի Կրկնապատկուի. Փաշինեան

«Նախագիծը ըստ էութեան պայմանագրային գինծառայողների աշխատավարձը կրկնապատկելու մասին է, բայց այս դէպքում էլ անցել ենք նոյն ճանապարհը, ինչ ուսուցիչների դէպքում», Հոկտեմբեր 13-ին, Կառավարութեան հերթական նիստին յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի կողմէ օրէնսդրական նախաձեռնութիւնը ներկայացուելէ յետոյ:

նակի բարեփոխումներու հացեցակարգի կարեւոր եւ անբաժանելի մասն է. «Մենք խնդիր ենք դրել, որ այդ բարեփոխումների արդիւնքում պիտի ունենանք արհեստավարժ բանակ, ընդ որում՝ այդ բանակի գինծառայողը պիտի չունենայ բնակարանի խնդիր, հացի խնդիր, ընտանիքի անդամների առողջապահութեան կարիքների ապահովման խնդիր եւ երեխաների ուսումը կազմակերպելու խնդիր»:

Վարչապետը նոյն յայտնեց, որ օրէնքի ընդունումէն անմիջապէս յետոյ պիտի սկսի գինծուորներու կամաւոր աթեսթաւորման գործընթացը. «Այսինքն՝ գինծառայողը աթեսթաւորում անցնելուց յետոյ կը ստանայ կրկնակի աշխատավարձ, երբեմն աւելին, եւ այս գործընթացը շարունակական բնոյթ կ'ունենայ»:

Ինչպէս նշեց վարչապետը, որոշում կայ նոյն համակարգը ներդնելու ոստիկանութեան մէջ՝ Ներքին Գործերու Նախարարութեան հիմնադրման տրամաբանութեան մէջ, ԱԱԾ-ի մէջ, փրկարար ծառայութեան մէջ. «Ես շատ ուրախ եմ, որ այս բանաձեւը գտել ենք, եւ շատ կարեւոր է, որ այդ բանաձեւը չվարկաբեկուի»:


Ընդդիմադիր Էտկար Ղազարեանը Ծեծուած Է

Սահմանադրական դատարանի աշխատակազմի նախկին ղեկավար, ընդդիմադիր գործիչ Էտկար Ղազարեանը դուրս եկած է «էրեբունի» բժշկական կեդրոնէն: Ան կը պնդէ, որ առաւօտեան իրենց շէնքի բակին մէջ երկու անձ յարձակած է իր վրայ, հայհոյանքներ տուած ու սկսած են հարուածել: Ընդդիմադիր գործիչին խօսքով՝ իրեն նետած են գետին ու հիմնականին մէջ գլխուս հարուածած, յետոյ հեռացած են:

Ղազարեան կ'ըսէ, որ յարձակուողները որեւէ պահանջ իրեն չեն ներկայացուցած, ու կը պնդէ, որ յարձակումը իր քաղաքական գործունէութեան պատճառով է:

ՍԴՀԿ-ի Կոչը Միջազգային Հանրութեան

Հայաստան Ատրպէյճան յարաբերութիւններում, ինչպէս նաեւ տարածաշրջանի խաղաղութեան համար իր անուրանալի ներդրումն ունի Ֆրանսան, ի դէմս նախագահ Էմանուէլ Մաքրոնի շատ յստակ եւ հասցեական յայտարարութիւններով: Մի բան, որ ակնկալում ենք մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանից:



Վերջին օրերին կարելի էր գարգացում եղաւ նաեւ Եւրոպայի կողմից ժամանող քաղաքացիական դիտորդական առաքելութիւնը, որ թերեւս յստակ ազդակ է ԵՄ-ի կողմից մեր տարածաշրջանում կայունութեան հաստատման եւ ՀՀ-ի նկատմամբ մտահոգութեան:

Այս ամէնը չի լինի, եթէ չլինէր քաղաքակիրթ աշխարհի արձագանգը, այդ թւում նաեւ Պուլտեպակի ՍԴՀ/SPD խմբակցութեան՝ Հայաստանի ինքնիշխան տարածքի վրայ Ատրպէյճանի վերջին յարձակումը դատապարտող յայտարարութիւնը: Միւս կողմից, ակնյայտ է, որ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը, հակառակ խաղաղութեան պայմանագիր կնքելու վերաբերեալ հրապարակայնօրէն արտայայտած պատրաստակամութեանը, մտադիր չի դադարեցնել իր սադրիչ ու հայատեաց գործողութիւնները: Այդ առումով, խիստ անհրաժեշտ է, որ միջազգային հանրութիւնը շարունակի խիստ եւ հասցեական կերպով դատապարտել Ատրպէյճանի այս վարքագիծը եւ նեցուկ կանգնի ժողովրդավարութեան ուղիով հաստատապէս շարժուող Հայաստանին: ՍԴՀ-ն շնչակեան Կուսակցութեան անունից կոչ ենք անում չբաւարարուել միայն դատապարտող կոչերով, այլ գործնական քայլերով յստակ պատգամ ուղարկել Ատրպէյճանական կողմին առ այն, որ նմանօրինակ հետագայ որեւէ ոտնձգութիւն ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ենթակայ է պատասխանատուութեան, առնուազն պատժամիջոցների տեսքով:

ՍԴՀԿ Հայաստանի Շրջանի Վարիչ Սարմին

Կառավարութիւնը Ստադիր Է Փոխել ՀՀ Քաղաքացիութիւն Ստանալու Կարգը

Գաղթի աննախադէպ հոսքի պայմաններուն մէջ կառավարութիւնը մտադիր է փոխել Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու կարգը՝ յստակացնելով այն պահանջները, որոնք բաւարարելու պարագային օտարերկրացիները պիտի կարենան դիմել կապոյտ անձնագրի համար:



Առնուազն 150 հազար տղարի ներդրումներ Հայաստանի մէջ, անշարժ գոյքի, պետական պարտատոմսերու ձեռքբերում, յաջողութիւններ գիտութեան ու առողջապահութեան բնագաւառներու մէջ եւ շարք մը այլ պայմաններ: Կառավարութիւնը բազմաթիւ նոր չափորոշիչներ կ'առաջարկէ: Ոստիկանութեան մշակած այս նախագիծը օրերս հրապարակուած է նախագիծերու Edtaft.am կայքին մէջ, այժմ հանրային քննարկման փուլն է:

ձանցերու, բայց այս դրոյթի չափորոշիչները ամբողջութեամբ չէին: Նախագիծով կառավարութիւնը կը յստակացնէ պահանջները:

Աւելի վաղ խորհրդարանին մէջ քաղաքացիութեան մասին օրէնքին մէջ փոփոխութիւններու մասին խօսելով փոխտնտիկանապետ Արա Ֆիտանեան ընդգծած էր, որ նախաձեռնութիւնը օրհասական է. «Բոլորիս քաջ յայտնի պատճառներից էն էր, որ այս տարուայ ընթացքում, յատկապէս վերջին երկու ամիսների ընթացքում ասուելի մեծ ծաւալների է հասել Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար դիմողների թիւը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացու անձնագիր եւ նոյնականացման քարտ ստանալու համար դիմողների թիւը: Եւ նման պարզաբանումները այս պահի դրութեամբ իրականում օրհասական են»:

Նախագիծը քանի մը բաժիններ ունի: Առաջինը Հայաստանի տնտեսութեան մէջ նշանակալի աւանդի մասին է. առնուազն 150 հազար տղարի ներդրումներ, գոյքի ձեռքբերում, IT ոլորտին մէջ աշխատանքի բազմամեայ փորձ, IT ընկերութիւններու հիմնում եւ այլն:

Գործող օրէնքով քաղաքացիութիւն կրնայ տրամադրուել Հայաստանի մէջ մշտական բնակութիւն հաստատած մարդոց, հայազգիներուն, Հայաստանի քաղաքացիի հետ ամուսնացածներուն: Քաղաքացիութիւն կրնայ շնորհուիլ նաեւ պետութեան բացառիկ ծառայութիւններ մատուցած ան-

Եթէ առաջարկը օրէնքի ուժ ստանայ, միւս կէտով քաղաքացիութեան համար պիտի կարենան դիմել փորձառու գիտնականները, հայկական մշակույթի տարածման նպաստողները, բարեգործները: Բժշկութեան ոլորտին մէջ փորձաստրի կոչում ունենալը եւս հիմք կրնայ ըլլալ: Սա կը վերաբերի նաեւ 44-օրեայ պատերազմի ժամանակ Հայաստանի կամ Արցախի մէջ բժշկական օգնութիւն տրամադրած օտարերկրացիներուն:

Այդուհանդերձ, այս հիմքերը դեռ չեն երաշխաւորեր, որ դիմողը անպայման Հայաստանի քաղաքացիութիւն պիտի ստանայ, կ'ըսէ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութիւնը Հինգ տարի ղեկավարած Մնացական Բիչխաչեանը. «Սա դեռեւս չի նշանակում, որ անձը եթէ ձեռք բերեց գոյք, պէտք է դիմի, քաղաքացիութիւն անպայման շնորհուի նրան: Ոչ»:

ԼՈՒՐԵՐ

Բանակցութիւններուն Սեշ Ատրպէյճանը Զ'առաջարկեր Ունենալ Գնահատարի, Լաչինի Սիջանցքին Նման. Սիրզոյեան

Ատրպէյճանի ներկայացուցիչները բանակցութիւններուն մէջ չեն պնդեր եւ չեն առաջարկեր ունենալ ճանապարհ, որ պիտի ունենայ նոյն կարգաւորումները, ինչ Լաչինի միջանցքը: Այս մասին յայտարարեց ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը՝ Նովեմբերի իր պաշտօնակիցին հետ Երեւանի մէջ տեղի ունեցած միատեղասուլիսի ընթացքին: Միրզոյեան կ'անդրադառնար Թուրքիոյ արտաքին գործերու նախարարի յայտարարութեան առաջն, թէ իբր «Ատրպէյճանը իրաւացիօրէն կ'ըսէ, թէ Լաչինի միջանցքը եւ «Չանգեզուրի միջանցքը» պէտք է ունենան նոյն կարգավիճակը»:



Նախարարներ Սիրզոյեան եւ Յիւսէփիտ մամլոյ ասուլիսի ընթացքին

Միրզոյեան ընդգծեց, որ այդ ձեւակերպման մէջ մեծ չափազանցութիւն կայ, Ատրպէյճանը այդպիսի բան չ'ըսեր: «Բանակցութիւններուն Ատրպէյճանի ներկայացուցիչները չեն պնդում եւ չեն առաջարկում ունենալ ճանապարհ, որը կ'ունենայ նոյն կարգաւորումները, ինչ Լաչինի միջանցքը: Եթէ պարոն Չաուշօղլուն իր կողմից այս բաղադրիչն է մտնում բանակցութիւններուն, ապա երեւի լաւ կը լինի, որ իր անունից ասի: Ատրպէյճանն այդպիսի բան չի ասում», ըսաւ Միրզոյեան: ՀՀ արտաքին գործերու նախարարը ընդգծեց, որ իրաւացիօրէն որեւէ կողմ չի ալ կրնար այսպիսի բան պնդել, քանի որ կարգաւորումները տրուած են 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեամբ եւ հետագային նաեւ՝ 2021 թուականի Յունուար 11-ի եռակողմ յայտարարութեամբ: Երկու յայտարարութիւններն ալ հրապարակային են:

«Այնտեղ կայ Լաչինի միջանցք, որը կեանքի ճանապարհ է ԼՂ հայութեան համար եւ կայ յաջորդիւ տարածաշրջանի ճանապարհային եւ տնտեսական ենթակառուցումներէ իր արտադրութեան կառուցումներէ: Խօսուած է նաեւ Նախիջեւանի հետ նոր կապուղու մասին: Մենք այս առումով մեր դիրքորոշումը բազմիցս յայտնել ենք, այն չի փոփոխուել, բոլոր ճանապարհները՝ այդ թուով եւ գործողները, եւ ենթադրաբար նոր կառուցուելիքները, պէտք է գործեն այն երկրներէ ինքնիշխանութեան եւ օրէնսդրութեան ներքոյ, որոնց տարածքով անցնում են», ըսաւ Միրզոյեան: Նորվեմբերի արտաքին գործոց նախարար Անիտիկէն Հիւսէփիտի գլխաւորած պատուիրակութիւնը շարք մը պաշտօնական հանդիպումներ ունեցաւ, որոնց ընթացքին ծանօթացաւ Հայ-Ատրպէյճանական սահմանին վրայ տիրող իրավիճակին:

Ատրպէյճանի Դէմ Պատժամիջոցներ Պահանջող Նախագիծ՝ Ֆրանսայի Ծերակոյտէն Ներս

Ֆրանսայի Ծերակոյտին մէջ կ'առաջարկուի ընդունել վերջին յարձակումներու առնչութեամբ Ատրպէյճանի դէմ պատժամիջոցներ եւ Հայաստանի տարածքէն ատրպէյճանական զորքերու դուրսբերում, հայ ռազմագերիներու անպաշտպանութեան արդարացիութեան հարցում պահանջող բանաձեւ:

Բանաձեւի նախագիծին մէջ, որ հրապարակուած է ֆրանսական խորհրդարանի վերին Պալատի պաշտօնական կայքէջին մէջ, վճռականօրէն կը դատաւարտուի ատրպէյճանական յարձակումը այս տարուան Օգոստոսի սկիզբը Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը կապող Լաչինի միջանցքին մէջ ու Սեպտեմբեր 13-14-ին Հայաստանի ինքնիշխան տարածքի հարաւային եւ հարաւարեւելեան շրջաններուն մէջ:

Ծերակոյտը նախագիծը ընդունուելու պարագային ֆրանսական կառավարութեան պիտի պահանջէ հետամուտ ըլլալ, որպէսզի ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը, ուր արտակարգ նիստի ժամանակ միջազգային հանրութիւնը

դատաւարտած է ատրպէյճանական յարձակումը, դիմի միջազգային Քրէական Դատարան «Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքին մէջ Ատրպէյճանի յարձակման հարցով, այդ շարքին՝ հետաքննելու զանգուածային եւ պատերազմական յանցագործութիւնները»:

Նախագիծը կառավարութեան կողմէն եւրոպական գործընկերներուն հետ դիտարկել աւելի վճռական պատշաճ պատասխաններ ատրպէյճանական նոր յարձակումներուն, այդ շարքին՝ ատրպէյճանական ղեկավարներու դոյքի բռնագրաւում եւ նաւարկելու Ատրպէյճանէն կազմի ու քարիւղի արտահանման վրայ:

Ծերակոյտի բանաձեւին նախագիծը ֆրանսական կառավարութեան կը յորդորէ «բոլոր միջոցներով ցոյց տալ Ֆրանսայի սատարումը Հայաստանին՝ դիտարկելով մասնաւորապէս Հայաստանի պաշտպանութեան կողմէն ուժեղացումը», եւ «անմիջապէս ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու հայ եւ Հայաստանի բնակչութիւններու անվտանգութիւնը միջազ-

Տեյվիտ Փրայս Շեշտած Է Ատրպէյճանական Զօրքերը Անյապաղ Ելման Դիրքեր Վերադառնալու Անհրաժեշտութիւնը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդունի ԱՄՆ Ներկայացուցիչներու Տան անդամները

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատի Ժողովրդավարական Գործընկերութեան Յանձնախումբի (ԺԳՀ) նախագահ Տէյվիտ Փրայսի գլխաւորած պատուիրակութիւնը:

Նիկոլ Փաշինեան ողջունած է պատուիրակութեան այցը Հայաստան եւ ընդգծած է հայ-ամերիկեան փոխգործակցութեան կարեւորութիւնը՝ Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներու հետեւողական իրականացման գործին մէջ:

Վարչապետը նշած է, որ ՀՀ քաղաքացիները միանշանակօրէն ընտրած են ժողովրդավարութեան ուղին եւ ՀՀ կառավարութիւնը հաստատակամօրէն պիտի շարունակէ իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներու հարուստ օրակարգը: Կառավարութեան ղեկավարին խօսքով՝ վերջին շրջանին հայ-ամերիկեան աշխոյժ շփումներն ու բարձր մակարդակի փոխացելութիւնները հասցնելու հարցը շարունակական զարգացման:

Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Հայաստանի ինքնիշխան տարածքին նկատմամբ Ատրպէյճանի յարձակման եւ կարեւորած է Միացեալ Նահանգներու եւ ընդհանրապէս՝ միջազգային հանրութեան համարժէք ու հասցեական արձագանգը: Միաժամանակ, վարչապետը շեշտած է Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցներուն անվտանգութեան ու իրաւունքներու ապահովման կարեւորութիւնը: Նիկոլ Փաշինեան բարձր գնահատած է նաեւ ԱՄՆ-ի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման փաստը:

Տէյվիտ Փրայս շնորհակալութիւն յայտնած է Չեքմ ընդունելութեան համար եւ ողջունած է Հայաստանի մէջ ժողովրդավարական հաստատութիւններու զարգացման միտումը հետեւողական քայլերը: Ան եւս ընդգծած է հայ-ամերիկեան սերտ փոխգործակցութեան ընդլայնման կարեւորութիւնը՝ ի նպաստ տարբեր ոլորտներու մէջ կապերու զարգացման ու ամրապնդման:

Ներկայացուցիչներու Պալատի Ժողովրդավարական Գործընկերութեան Յանձնախումբի նախագահը անթոյլատրելի համարած է Ատրպէյճանի կողմէ Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժումը ու նշած է ատրպէյճանական ստորաբաժանումներու՝ անյապաղ ելման դիրքեր վերադառնալու անհրաժեշտութիւնը: Տէյվիտ Փրայս դատաւարտած է հայ զինուորներու նկատմամբ ատրպէյճանական զինուած ուժերու ներկայացուցիչներու կողմէ անմարդկային վերաբերմունքն ու գործողութիւնները: Միաժամանակ, նաան կարեւորած է մինչ օրս Ատրպէյճանում մէջ պահուող ռազմագերիներու վերադարձին ապահովումը:

Վարչապետը բարձր գնահատած է ԱՄՆ-ի ջանքերը այդ հարցով: Զրուցակիցները միտքեր փոխանակած են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, ինչպէս նաեւ՝ տարածաշրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն շուրջ:

Պաքուն «Անհրատեսական» Կը Համարէ Սահմանի Անցակետերը Բանալու Երեւանի Առաջարկը

Ատրպէյճանի արտաքին գերատեսչութիւնը «անիրատեսական» որակած է սահմանի անցակետերը բանալու վերաբերեալ Երեւանի առաջարկը:

«Հայաստանը պէտք է հրաժարի կեղծ առաջարկներով 2020 թուականի Նոյեմբերի եռակողմ յայտարարութեամբ Չանգեզուրի միջանցքով մայրուղիները եւ երկաթուղային ճանապարհները միաւորելու մասին ստանձնած պարտաւորութեան խուսափելու եւ 20 ամիս տեւող քննարկումները ան-

տեսելու գործընկերակցին, այդ լաւ քաղաքականութիւն չէ», կ'ըսուի Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան Թուրքիոյ կ'ընդունելու: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան աւելի վաղ Թուրքիոյ իր էջով գրած է, որ Պաքուն ամիսներ շարունակ չէ արձագանգած Ատրպէյճանի եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետութեան հետ կապը ապահովելու համար սահմանին երեք անցակէտ բանալու վերաբերեալ Երեւանի առաջարկին:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչման անհրաժեշտութիւնը»:

գայնօրէն ճանչցուած սահմաններուն մէջ»:

Նախագիծով վերահաստատ-

Պաշտպանութեան Նախարար Սուրէն Պապիկեան Այցելած Է Հնդկաստանի Մէջ Տեղի Ունեցող «DEFEXPO» Ցուցահանդէսը



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան «DEFEXPO» ցուցահանդէս այցի ընթացքին

Հնդկաստան աշխատանքային այցի շրջանակին մէջ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան այցելած է Հնդկաստանի կանտինակար քաղաքին մէջ բացուած «DEFEXPO» ցուցահանդէս: Սուրէն Պապիկեանը շրջած է ցուցահանդէսի տաղաւարներով, ծանօթացած է ներկայացուած ցուցանմուշներուն, գրուցած է շարք մը ընկերութիւններու ղեկավարներուն հետ:

Այցի շրջանակին մէջ ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդիպած է Հնդկաստանի պաշտպանութեան նախարար Շրի Ռաճնաթ Սինհի հետ: Զրուցակիցները գոհունակութիւն յայտնած են

համագործակցութեան ներկայ մակարդակին վերաբերեալ, քննարկուած են համագործակցութեան ընդլայնման հնարաւորութիւնները, երկուսուսուսակցական եւ ռազմատեխնիկական համագործակցութեան շարք մը մտարկներ:

ՀՀ պաշտպանութեան նախարարը ներկայացուցած է ատրպէյջ-ճանակաւ վերջին յարձակման հետեւանքով ստեղծուած իրադրութիւնը եւ շնորհակալութիւն յայտնած է միջազգային ատեաններուն մէջ Հնդկաստանի յստակ դիրքորոշման համար: Հանդիպման ավարտին Սուրէն Պապիկեան իր գործընկերոջ հրաւիրած է պաշտօնական այցով այցելել Հայաստան:

Հայաստանի Եւ Արցախի Նախագահները Քննարկած Են Անվտանգութեան Հարցերը



Հայաստանի եւ Արցախի ղեկավարներու հանդիպումը Երեւանի մէջ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Սախաչեան ընդունած է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի գլխավորած պատուիրակութիւնը: Հանդիպման ընթացքին քննարկուած են զարգացող հիմնարկներու կարգաւորման ներկայիս մարտահրաւէրներն ու հնարաւորութիւնները:

«Մի փաստ պէտք է արձանագրել, որ Հայաստանի իշխանութեան բոլոր ներկայացուցիչները որեւէ որոշում չեն կարող կայացնել ձեր ետեւում կամ ձեզանից գաղտնի պահել: Յանկացած քննարկման մասին ես տեղեկ եմ, եթէ նոյնիսկ ներկայ չեմ՝ ծանօթանում եմ բոլոր փաստաթղթերին: Արցախի հարցը միշտ բարձրացուած է եւ օրակարգում կայ, մեր օրակարգում այդ խնդիրը չի կարող չլինել: Մենք

ուղղակի պէտք է լուծման տարբերակ միասին քննարկենք եւ մեր քաղաքացիներին հասանելի դարձնենք, թէ մենք ինչպէս ենք պատկերացնում ապագան», իր խօսքին մէջ նշած է ՀՀ նախագահը:

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը շնորհակալութիւն յայտնած է նախագահին ընդունելութեան համար, ընդգծած է, որ միշտ տեղեկ կ'ըլլայ հիմնախնդրի կարգաւորման շուրջ առկայ քննարկումներուն եւ հնարաւոր տարբերակներուն մասին:

Հանդիպման ընթացքին մ Արայիկ Յարութիւնեանը նախագահ Սախաչեանին ներկայացուցած է Արցախի մէջ տիրող ընդհանուր իրադրութիւնը: Քննարկուած է անվտանգութեան եւ օրակարգային հարցերու լայն շրջանակ:

Ատրպէյճանը Հայաստանի Աւելի Շատ Տարածքներ Գրաւելու Մտադրութիւններ Ունի, Պէտք Է Կանխել. Նիկոլ Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ԱՊՀ պետութիւններու ղեկավարներու խորհուրդի հերթական նիստին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ղազախստանի մայրաքաղաք Ասթանայի մէջ մասնակցած է ԱՊՀ պետութիւններու ղեկավարներու խորհուրդի հերթական նիստին:

ԱՊՀ գագաթաժողովին Հայաստանի վարչապետը բարձրացուցած է ԱՊՀ երկիրներու միջեւ սահմանները ճանշնալու հարցը:

Ասթանայի մէջ ԱՊՀ երկիրներու ղեկավարներու գագաթաժողովին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ժամանակավրէպ համարած է ՀԱՊԿ-ի մէջ ԱՊՀ-ին դիրքի կարգավիճակ տալու առաջարկին՝ բարձրացնելով երկու հիմնական հարց:

«Արդեօք ՀԱՊԿ-ը ճանաչում է 1991 հաստատուած ԱՊՀ երկրների պետական սահմանները որպէս ԱՊՀ հիմնարար փաստաթղթեր: Սա կարելի է հարց է, քանի որ խօսքը ՀԱՊԿ-ի պատասխանատուութեան գոտու եւ թոյլ տուէք ասել հէնց կազմակերպութեան գործառնութեան մասին է: Եթէ հիմնուենք մեկնաբանութիւնների վրայ, ըստ որոնց ԱՊՀ երկրների միջեւ սահմաններ գոյութիւն չունեն, քանի որ այդ սահմանները սահմանազատուած չեն, դա նշանակում է, որ ՀԱՊԿ-ի պատասխանատուութեան գոտին որոշուած չէ, այսինքն այն գոյութիւն չունի», ընդգծած է ՀՀ վարչապետը:

Փաշինեան նաեւ ըսած է, որ շատ կարեւոր է յստակ պատասխան

տալ, թէ արդեօք ԱՊՀ երկիրները կը ճանշնան միմեանց միջեւ 1991-ին հաստատուած սահմանները որպէս ԱՊՀ հիմնարար փաստաթուղթեր եւ նշած է, որ այս հարցին դրական պատասխանը շատ կարեւոր է ԱՊՀ տարածքին մէջ կայունութեան եւ անվտանգութեան համար:

Ան նշած է, որ այդ հարցերը Հայաստանի համար առանձնապատուկ սրութիւն ձեռք բերած են Հայաստանի դէմ Ատրպէյճանի բոլորովին չհրահրուած վերջին ռազմական յարձակման պատճառով եւ ներկայացուցած է ատրպէյճանական զօրքերու յարձակման մասշտաբներն ու վայրագութիւնները:

Ան յայտնած է, որ ատրպէյճանական զինուած ուժերը զնդակոծած են Հայաստանի 36 բնակավայր: Աւելի քան 7 հազար 600 մարդ տեղահանուած է: Զոհերուն եւ անհետ կորսուածներուն թիւը գերազանցած է 210-ն, վիրաւորուած է 293 զինուոր եւ ութ խաղաղ բնակիչ: 28 զինուոր ղեռ անհետ կորսուած են: Ատրպէյճանական կողմը ինք տարածած է խոշտանգումներու, գերեզարուած անձերու կամ արդէն մահացած զինուորականներու մարմիններու խեղճան ցնցիչ տեսանիւթեր:

Փաշինեան ըսած է, որ Հայաստանը իրապէս անկեղծ նպատակադրուած է տարածաշրջանին մէջ խաղաղութեանը:

«Հայկական Կողմի Քայլերը Կը Կրեն Պաշտպանական Բնոյթ». Երեւանը՝ Պաքուի

Վարդէնիսի ուղղութեամբ հրետանային միջոցներու առկայութիւնը անմիջականօրէն կապուած է Ատրպէյճանի զինուած ուժերուն կողմէ լրացուցիչ ուժերու եւ միջոցներու տեղաշարժով ու բացազատման հետ, որ յառաջացուցած է որոշակի լարուածութիւն, կը տեղեկացնէ Հայաստանի ռազմական գերատեսչութիւնը՝ մեկնաբանելով Պաքուի յայտարարութիւնը, թէ հայկական կողմը յաւելուելով ուժեր՝ հետեւակ եւ հրետանի կը կուտակէ Տաշքէսանի ուղղութեամբ:

Երեւանը կը նշէ, որ հայկական կողմի քայլերը իրականացուած են տուեալ գոտիին մէջ ատրպէյճանական հրետանային եւ զենիթային յաւելեալ միջոցներու տեղափոխումէ յետոյ եւ կը կրեն բացառապէս պաշտպանական բնոյթ: Հայկական կողմի գործողու-

թիւնները իրադրութիւնը լարելու նպատակ չունին, կը շեշտէ Պաշտպանութեան Նախարարութիւնը՝ ընդգծելով, որ ատրպէյճանական կողմի՝ չիշտակուած միջոցները տուեալ ուղղութեանն ղուրս բերելու պարագային, հայկական կողմը եւս ղուրս պիտի բերէ իր յաւելեալ միջոցները:

«Հայկական կողմը պատրաստ է տուեալ հարցի շուրջ բանակցելու», ըսուած է յայտարարութեան մէջ:

Նշենք, որ պաշտօնական Պաքուն հաղորդած էր, որ Հոկտեմբեր 16-ին կը նկատեն զինուորներու եւ հրետանի 4 միաւորներու տեղադրում Ատրպէյճանի բանակի դիրքերուն դիմաց՝ Տաշքէսանի ուղղութեամբ, նշելով որ «տարածաշրջանին մէջ հնարաւոր սրման համար պատասխանատուութիւնը Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը պիտի կրէ»:

Տիարպեթիի Փաստաբաններու Պալատը Արդարացուած Է. «Հայոց Ցեղասպանութիւն» Ըսելը Յանցագործութիւն Զէ



1915-ին տեղի ունեցածը Հայոց Ցեղասպանութիւն անուանելու համար Տիարպեթիի Փաստաբաններու Պալատի վարչակազմին դէմ յարուցուած քրէական գործը աւարտած է արդարացման վճիռով: Այս մասին կը հաղորդէ ermenihaber.am-ը:

Փաստաբան Նուրման Քայեան յայտնելով է, որ Տիարպեթիի 11-րդ ծանր յանցագործութիւններու դատարանին մէջ կայացած նիստին ընդունուած է արդարացման որոշում: Փաստաբանը մասնաւորապէս նշած է. «Տիարպեթիի Փաստաբաններու Միութեան 2018-2020 թուականներու վարչակազմին դէմ 1915-ը ցեղասպանութիւն անուանելու համար բացուած գործի դատական նիստին ենք: Պալատի նախկին նախագահ Ճիհան Այտընը կը պատմէ, թէ ինչեր կատարուած են Տիարպեթիի մէջ 1915 թուականին: Այսինքն կ'ըսէ, որ այն, ինչ որ ցեղասպանութիւն է, ցեղասպանութիւն ալ կ'անուանենք եւ մեր խնդիրը առերեսումն է ու ճշմարտութեան կոչը:

Դատախազը արդարացում պահանջեց՝ պատճառաբանելով, որ իր

կարծիքով յանցագործութեան տարր եւ յանցագործութիւն կատարելու (պետութիւնը հրապարակաւ նուաստացնելու) մտադրութիւն չէ եղած: Այսպիսով յանցակազմի բացակայութեան հիմքով կայացուած է արդարացման որոշում»:

Յիշեցնենք, որ նշեալ գործը յարուցուած էր Թուրքիոյ Քրէական օրէնագիրքի 301-րդ յօդուածի յատկանշերով: Անոր համար պատճառ ծառայած է Պալատի պաշտօնական կայքին մէջ տեղ գտած երկու առանձին յայտարարութիւն. 2019 թուականի Ապրիլ 24-ին «1915...!» վերնագրով հրատարակուած յայտարարութիւնը, ինչպէս նաեւ 2019 թուականի Դեկտեմբեր 2-ին «Ձեռք վախնար եւ պիտի չլռենք» վերնագրով յայտարարութիւնը:

Վերջինս հրատարակուած է որպէս արձագանգ Տիարպեթիի Փաստաբաններու Պալատի 2017-2018 թուականներու վարչակազմին դէմ կրկին Ապրիլ 24-ին կատարուած յայտարարութեան պատճառով յարուցուած նոյնաբովանդակ գործին:

Նախագահ Մաքրոն Ռուսաստանը Կը Մեղադրէ

Շարունակուած էջ 1-էն

բեր 13-14-ին «Հայաստանի միջազգայնօրէն ճանչցուած տարածքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները բացայայտեցին Ռուսիոյ անկարողութիւնը՝ հանդէս գալու որպէս իրաւարար, ինչին ան բացառիկութեան կարգով կը յաւանդէր 2020 թուականի պատերազմէն յետոյ»:

Յիշեցնենք, որ Ֆրանսացի գրող Սիլվեն Թեսոն քանի մը օր առաջ ֆրանսական յայտնի հեռուստատեսութիւններէն մէկուն տուած հարցազրոյցին ժամանակ խօսելով դէպի Եւրոպա Ատրպէյճանի կազմի մատակարարումներէն նշած էր, որ իրեն համար նախընտրելի է հայերու կողքին ըլլալով ցուրտ ձմեռ անցընել, քան տաքնալ Ատրպէյճանի միջոցով Եւրոպա առաքուած կազմով: «Այս ձմրան ես կը նախընտրեմ քիչ մը մսիլ հայերուն հետ, քան տաքնալ ատրպէյճանցիներուն շնորհիւ», ըսած է Թեսոն:

Ֆրանսացի նախագահ Էմանուէլ Մաքրոնի յայտարարութիւնները, թէ իբր Ռուսիան կ'օգտագործէ Լեռնային Ղարաբաղի հակա-

մարտութիւնը Հարաւային Կովկասի ապակայունացման համար, անպատշաճ են եւ անընդունելի, յայտարարած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը:

«Միաժամանակ, ի հարկէ, ես զարմանքով կարգաւորեցի Ֆրանսացի նախագահի որոշ մեկնաբանութիւններ հանդիպման արդիւնքներուն վերաբերեալ: Կը համարեմ, որ այդ յայտարարութիւնները... անոնց մէջ կը բացակայի հակամարտութեան բուն ընթացքի ըմբռնումը, եւ ֆրանսական, դատելով ամէն ինչէն, տեղեկատուութիւնը կողմերու դիրքորոշման մասին, այդ պատճառով անոնք կը հնչէին անպատշաճ, անընդունելի», ըսած է Փութին նեղ կազմով ԱՊՀ զագաթաժողովին՝ յաւելելով, որ իրենք հնարաւոր է այդ նորէն քննարկեն Ֆրանսացի նախագահին հետ:

Անոր խօսքով՝ Ռուսիան միշտ ձգտած է որեւէ հակամարտութեան կարգաւորման: «Ամէն պարագայի, Ռուսիան միշտ անկեղծօրէն ձգտած է, որ որեւէ հակամարտութիւն կարգաւորուի, այդ շարքին նաեւ հարցերը, որոնք կ'առնչուին Ղարաբաղին եւ անոր շուրջ», ըսած է Փութին:

Հայ Ռազմագերիներու Սպանութիւնը Պատերազմական Յանցագործութիւն Է. Human Rights Watch

Ատրպէյճանական ուժերու կողմէ հայ ռազմագերիներու մահապատիժը 2022 թուականի Սեպտեմբերին պատերազմական յանցագործութիւն է, որուն համար պէտք է պատասխանատուութեան ենթարկուիլ, յայտարարած է Human Rights Watch կազմակերպութիւնը: Human Rights Watch-ը վերլուծած է Հոկտեմբերի սկիզբը ընկերային ցանցերուն մէջ հրատարակուած տեսանիւթը, ուր կ'երեւի առնուազն եօթը հայ ռազմագերիներու արտադատական մահապատիժը ատրպէյճանական ուժերու կողմէ:

«Յանձնուած գինուորներու սպանութիւնը սարսափելի պատերազմական յանցագործութիւն է», կ'ըսէ Human Rights Watch-ի Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ տնօրէն Հիւ Ուիլիըմսը: «Այս գինուորները գերի ինկած եւ վայր դրած են զէնքերը», նշած է Ուիլիըմսը, - զանոնք գերեզմանները պարտաւոր էին անոնց հետ մարդասիրականօրէն վերաբերիլ, փոխարէնը, ակնյայտօրէն ատրպէյճանական ուժերը սառնասրտօրէն գնդակահարած են զանոնք: Անոնք պէտք է պատասխանատուութեան ենթարկուին»:

Մաքրոնի Ծանր Մեղադրանքները

Շարունակուած էջ 1-էն

Հոս պէտք է արձանագրել, որ Ուքրանիոյ պատերազմին հետեւանքով արեւմտեան երկիրներու գրեթէ բոլոր ղեկավարները խզած են իրենց շփումները նախագահ Փութինի հետ: Մաքրոն, եւ որոշ չափով Պերմանիոյ վարչապետ Օլաֆ Շուլթց, միակն են, որոնք կը շարունակեն կապի որոշ գիծ մը պահել անոր հետ՝ փորձելով վերջ տալ ամիսներէ ի վեր շարունակուող ուքրանական պատերազմին:

Մաքրոնի այս յայտարարութեան յաջորդեց վարչապետ Նիկոլ Փաշինեան Ելոյթը ԱՊՀ երկիրներու ժողովի ընթացքին, ուր ան հարցականի տակ առաւ, այդ երկիրներու մեծամասնութիւնը ընդգրկող ՀԱԿԿ ռազմական դաշինքի իմաստը եւ գոյութիւնը, այդպիսով իսկ հակադրուելով Ռուսաստանին:

Այս զարգացումները կու

գամ առաւել եւս ամրապնդելու Հայաստանի մէջ օրըստօրէ գարգացող այն համոզումը որ, այսուհետեւ կարելի չէ ամբողջութեամբ ապաւինիլ Ռուսաստանի վրայ: Հասարակութեան ամենէն ռուսամետ տարրերուն մօտ իսկ հարցականներ կը յառաջանան Հայաստանի նկատմամբ Մոսկուայի որդեգրած քաղաքականութեան նկատմամբ:

Ֆրանսայի եւ Սիւացեալ Նահանգներու ներգրաւուածութեան աստիճանի բարձրացումը՝ տարածաշրջանէն ներս, կրնայ որոշ երաշխիքներ տալ Հայաստանին, պայմանաւ որ, ան կռուախնձոր չդառնայ մեծ պետութիւններուն միջեւ, պարտադրելով երեւանին՝ նախընտրութիւն կատարելու մէկուն կամ միւսին միջեւ: Ներկայ հանգրուանին Հայաստան պաշտպանուելու համար պէտք ունի բոլոր կողմերուն:

Գ. Խոտանեան «ՄԱՍԻՍ»

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆԸ
ԿԸ ՀՐԱԲԻՐԷ ԲՈՒՈՐ ՀԱՃՆՑԻՆԵՐԸ

**ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
102-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ**

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 30, 2022
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA. 91107
ՀՈԳԵՎԵՐԳԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԺԱՄԱՆ 11:00
և Հ.Բ.Մ.-ի << Պոեանեան >> սրահ
2495 E. Mountain St. Pasadena, CA. 91104
ՀՈԳԵՎԵՐԿ և ՃԻՏԱԳՈՒԹԻ ՕՐՀՆՈՒԹԻՆ ԺԱՄԱՆ 1:00

**THE COMPATRIOTIC UNION OF HADJIN
INVITES ALL HADJINTZIS ON THE OCCASION OF THE**

**102-nd ANNIVERSARY
OF THE MARTYRS OF HADJIN**

SUNDAY, OCTOBER 30, 2022
St. Gregory Armenian Apostolic Church
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA. 91107
REQUIEM SERVICE AT 11:00 A.M.
AND A.G.B.U. << BOYADJIAN >> HALL
2495 E. Mountain St. Pasadena, CA. 91104
MEMORIAL SERVICE FOR OUR MARTYRS, MADAGH AT 1:00 P.M.

For reservation and sponsorship opportunities, please call (626) 798-2540 or (626) 390-2810
Visit us at www.hadjinusa.org - Tax deductible donation are accepted
The Compatriotic Union of Hadjin is a non-profit organization. Corporate I.D. # C2662210

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Տոքթ. Համբիկ Սարաֆեանի Հարցազրոյր Պետրոս Ղազարեանի Հետ

Ստորեւ կը ներկայացնենք ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ ԸՆԿ. Տոքթ. Համբիկ Սարաֆեանի հարցազրոյրը՝ «Հարցազրոյց Պետրոս Ղազարեանի հետ» յայտագրի ժիրին մէջ:



Պ.Ղ. Վերջին օրերուն շատ քննարկուեցաւ Լեւոն Տէր Պետրոսեանի հարցազրոյցը: Կարծիքները հիմնականին մէջ բաժնուած են երկու մասի. մէկ մասը կ'ըսէ, որ ան 1991-ին ալ Արցախը կը յանձնէր, հիմա ալ այդ գիծով կ'ընթանայ՝ կ'ուզէ Արցախը յանձնել, միւս մասը կ'ըսէ, որ ան 1991-ին ալ իրատես էր, այն ժամանակէն մեր միակ իրատես քաղաքական գործիչն է, որուն ըսածները միշտ տեղի կ'ունենան: Ինչպէ՞ս կը մեկնաբանուի:

Հ.Ս. Ես հակած եմ մտածելու, որ երկրորդ տարբերակն է աւելի ճիշդը, որովհետեւ ան չչեղեցաւ իր մօտեցումներէն, նոյնիսկ իշխանութիւնը յանձնելու ժամանակ ու անկէ ետք, նոյնիսկ ձեռք հետ հարցազրոյցին՝ 2017 թուականին: Իրապաշտութիւնը շատ կարեւոր է, եւ իրապաշտ քաղաքականութիւնը մանաւանդ մեր նման երկրին մէջ չափէն աւելի կարեւոր է, որովհետեւ կարելի է երազել, ձգտել, փափաքել ունենալ այնպիսի երկիր կամ արդիւնքներ, որ կը փափաքինք, բայց լոկ ցանկութեամբ հարցերը չեն լուծուիր, պէտք է շատ իրապաշտ ըլլալ մանաւանդ հիմա, որովհետեւ հիմա խօսելու ժամանակը չէ, գործելու ժամանակն է: Եթէ չենք գործեր, ի վնաս մեզի է միանշանակ: Եւ այդ առումով ես կը կարծեմ, որ այդ մօտեցումը ինչպէս պարզուեցաւ, ի դժբախտութիւն մեզի, այն ինչ կանխատեսած էր, չնայած կանխատեսում ալ չէր այդ, պարզապէս իրերու իրավիճակը ճիշդ գնահատած էր, եւ այդ գնահատականը բերած աջօրունան: Եւ պիտի ընդունինք, որ միակ քաղաքական գործիչն էր, որ նաեւ համարձակութիւնը ունեցաւ այդ միտքերը արտայայտելու, նաեւ պիտակաւորուեցաւ ու կը պիտակաւորուի մինչեւ այսօր:

Պ.Ղ. Դուք պարբերաբար կը հանդիպիք վարչապետին հետ արտախորհրդարանական ուժերու ձեւաչափով: Ի՞նչ կը քննարկէք:

Հ.Ս. Ամէն ինչ կը քննարկենք. որոշ բաներ հրապարակման ենթակայ չեն: Ամէն ինչ կը քննարկուի, տեղի կ'ունենայ շատ անկեղծ խօսակցութիւն, չկայ այնպիսի կաշկանդուածութիւն մեր մտքերուն մէջինը չըսելու, եւ կը ծաւալի հետաքրքրական քննարկում: Օրունաւ բոլոր հրատապ հարցերը կը քննարկենք, առաջարկութիւններ կ'ընենք, նախօրօք օրակարգ կը ձեւաւորուի մինչեւ հանդիպումը, որպէսզի իւրաքանչիւր կուսակցութիւն իր օրակարգը բերէ սեղա-

նին ու այդ հարցերուն վերաբերեալ քննարկումներ տեղի կ'ունենան: Բացի անկէ, վարչապետին կատարած այցելութիւններուն մասին միտքերու փոխանակում տեղի կ'ունենայ: Այսինքն ես կ'ըսէի, որ երանի հոն տեղի ունեցող բայց եւ յստակ քննարկումները խորհրդարանին մէջ տեղի ունենային, որպէսզի շատ աւելի առողջ արդիւնքներ ունենանք:

Պ.Ղ. Այս հարցումը դուք ձեւակերպեցիք: Ինչո՞ւ խորհրդարանին մէջ տեղի չ'ունենար:

Հ.Ս. Խորհրդարանին մէջ տեղի չ'ունենար, որովհետեւ յստակ է ինչ կը կատարուի: Ընդդիմութեան կեցուածքը շատ յստակ է, դժբախտաբար սա ոչ թէ պատերազմի հետեւանք է, այլ նախապատերազմեան ժամանակ ալ: Ես շատ աւելի չիչեմ, որ նոյնիսկ Քովիտի ժամանակ, երբ ամբողջ աշխարհը կը պայքարէր, օրինակ Ամերիկայի նման երկիր, ուրկէ եկած եմ, չէինք գիտեր ինչ ընենք, որեւէ երկրի մէջ չ'ընեցինք, որ վարչապետին հրաժարականը պահանջէին, որովհետեւ այսպէս ըսած համապատասխան պայքար չէր տաներ Քովիտի դէմ: Նոյնիսկ այդ պայմաններուն մէջ հրաժարական կը պահանջէին: Այսինքն անոնց օրակարգը չ'փոխուեցաւ, մնաց նոյնը, պարզապէս պատերազմէն յետոյ աւելի սրեցաւ եւ ապա շարունակուեցաւ: Կառուցողական ընդդիմութեան հասկացողութիւնը գոյութիւն չունի Հայաստանի մէջ, եւ թերեւս այդ պատճառով ալ կարելի չ'ըլլար ձեւաւորել երրորդ ուժը, մենք գոնէ մեզ կը համարենք այդտեղ, եւ մեր նման ուրիշ կուսակցութիւններ, որ տեղ ունենանք այս հարցերուն վերաբերեալ մեր տեսակէտները յայտնելու: Այսինքն այդ տեղը այնքան զբաղած ու ապականած է, որ հնարաւոր չ'ըլլար իսկապէս խորհրդարանական մակարդակով լուրջ քննարկումներ ընելու եւ նաեւ որոշ արդիւնքներու հասնելու:

Պ.Ղ. Նախագահները երբ հաւաքուած էին խօսելու, թեմաներէն մէկը որ Տէր Պետրոսեանը առաջարկած էր, ելլելով իրավիճակէն, այդ ընդդիմութիւն-իշխանութիւն երկխօսութիւնն էր: Բայց կայ ընդդիմութեան տեսակէտը, որ մեղաւորը իշխանութիւնն է եւ վարչապետը պէտք է Խեռայոյ եւ իրենք գան:

Հ.Ս. Ես ժողովրդավար երկրէ կու զամ եւ երկրի արժէքներուն ծանօթ եմ: Տեղի ունեցած է ընտրութիւն, եթէ ըսենք Նիկոլ Փաշին-

եանը 2020 թուականէն մինչեւ հիմա մնացած ըլլար իշխանութեան, կրնայինք ըսել, որ ան չի փափաքիր իշխանութիւնը յանձնել, բայց տեղի ունեցած է 2021-ի ընտրութիւնները: Այդ արհաւիրքէն ետք ժողովուրդը կրկին ազատ ու թափանցիկ ընտրութիւններով նախընտրած է իր առաջնորդը: Եթէ այդ տեղի ունեցած է, ուրեմն անհասկնալի է ինչպէս այդ պահանջը եւ համոզումը ձեւաւորուած է անոնց մօտ, որ իրենք ճիշդ են, ժողովուրդը՝ սխալ: Ժողովրդավարական երկիր ենք, եթէ ժողովուրդը պիտի չ'ընդունէր իրեն, 2021-ի Յունիսին այդ տեղի կ'ունենար եւ զինք կը հեռացնէին իշխանութենէն: Եթէ այդ տեղի չ'է ունեցած, ուրեմն այդ մասին խօսիլը անիմաստ է:

Պ.Ղ. Անոնք կ'ըսեն, որ ընտրութիւնը եղաւ, բայց ինչ որ կը կատարուի հայ-ատրպէյճանական սահմանին եւ բանակցութիւնները, կ'ըսեն որ իշխանութեան պատճառով մեր վրայ կը յարձակին ու կը կրակեն: Եթէ իրենք երթան ու մենք գանք, այդպէս չ'ըլլար, կ'ըսէ ընդդիմութիւնը:

Հ.Ս. Այդ մէկը շատ անլուրջ առարկութիւն է, որովհետեւ եթէ իրենք ունին աւելի լուրջ պատճառաբանումներ եւ միջոցը՝ թէ ինչպէս այդ մէկը կատարել, այդ կրնային դարձնել իրենց ընտրապայքարի լոզունգ եւ այնուհետեւ ցոյց տալին, թէ ինչպէս այդ մօտեցումը պիտի ունենան: Առ այսօր միակ բանը որ կը լսենք ընդդիմութենէն այն է, որ վարչապետը չի գիտեր բանակցել՝ մենք կու գանք եւ իրենցմէ աւելի լաւ կը բանակցինք, ան չի հասկնար թէ ինչ տեղի կ'ունենայ՝ մենք կու գանք աւելի լաւ կ'ընենք, մենք Ռուսիոյ հետ աւելի մօտիկ ենք քան ինքն է, մենք Ատրպէյճանին հետ կրնանք ուրիշ լեզուով խօսիլ քան ինք: Մենք գետնի վրայ ունինք իրականութիւն մը, որ այսօր իշխանութեան եկած ռեւէ մարդ ստիպուած պիտի ըլլայ այդ ուղղութեամբ երթալ, որովհետեւ մենք արահետի մէջ ենք, հսկայ ճանապարհ չունինք, որ կարենանք այս կամ այն կողմէն երթալ, փոքր արահետ է, միւս կողմը անդունդն է, եւ այդ փոքր արահետով ղեկավարութիւնները եւ բոլորը կը շարժին: Այսինքն ձեւացնել, որ իրենք կախարդական ինչ-որ բան մը ունին, որ կրնան օգտագործել իշխանութեան թեմէն յետոյ, անիմաստ է: Ու այնքալ եւ շարունակել այդ ուղղութեան վրայ մնալը նաեւ կարեւոր ժամանակ կը խլէ մեր ժողովուրդէն ու երկրէն, որ կարենանք լուծման հնարաւոր միջոցները գտնել:

Պ.Ղ. Ինչպէ՞ս կը գնահատէք, որ պազերազմի ժամանակ կոչ կը հնչէր սահմանադրական կարգի տապալման, իշխանափոխութեան: Եւ այդ կը կատարուի հայրենիքը փրկելու համար:

Հ.Ս. Շատ վատ: Պատրուակ է հայրենիք փրկելը, միանշանակ իշխանութեան հասնելու ձգտում է: Ինչպէս ըսի, այդ ձգտումը պատերազմի աւարտով չ'սկսաւ, անկէ առաջ սկսած էր: Հասկնալի է, քաղաքական նկատառումներով կարելի է այդ ընել, բայց երբ որ իրավիճակը փոխուեցաւ, այդ նոյն ուղեգիծը շարունակուեցաւ: Մենք որպէս կուսակցութիւն մեր բոլոր

յայտարարութիւններուն մէջ միակ բանը որ կը մատնանշէինք՝ միասնականութեան անհրաժեշտութիւնն էր, որովհետեւ այդ բացարձակ անհրաժեշտութիւն էր եւ ոչ թէ ձեւական, եւ լաւագոյն օրինակը մեզի տուաւ Ուքրանիան: Գրեթէ կարելի է ըսել, որ նոյն ճակատագրին ենթարկուեցան ինչ որ մենք, ուստի կան բանակը հասաւ երկրի մատոյցները, գտնուեցաւ ռեւէ քաղաքական գործիչ կամ խմբաւորում, որ դուրս եկաւ փողոց ու ըսաւ «Ձեւեմք, մեր գլխուն ի՞նչ բերիր, պէտք է երթաւ ու մենք քու տեղը իշխանութեան գանք»: Չկար, անմիջապէս համախմբուեցան, եւ նոյնիսկ Փորոշենքոն, որուն տնային կալանքի ենթարկած էր, ան իսկ հրապարակ իջաւ հրացանը ձեռքին ու ասպարէզ կը կարդար ուսաներուն: Այդպիսի միջոցառումները մէջ շատ աւելի ուրիշ տպաւորութիւն է, եւ Արեւմուտքը անկէ խանդավառուած, մանաւանդ եւ Ամերիկայի մասով կրնամ ըսել, տեսան որ այս մարդիկ ինչքան հայրենասէր են եւ հայրենիքը կը գնահատեն: Իսկ այստեղ ճիշդ հակառակը տեղի ունեցաւ: Եւ ես կը կարծեմ այդ է պատճառներէն մէկը, որ Ատրպէյճանը, Ալիեւը շատ աւելի լիտի ու ամբարտաւան պահուածք ունի, որովհետեւ կը տեսնէ, որ իր իւրաքանչիւր ճշման փորձ անպայման հակազդեցութիւն կ'ունենայ Հայաստանի քաղաքական հրապարակին վրայ: Եւ սա չնկատելը կամ չնկատել ձեւացնելը, ըստ ինձի, ուղղակի չեմ գիտեր ինչ բառերով կարելի է նկարագրել:

Պ.Ղ. Ունի՞ք ակնկալիքներ 5 Գախազահներու կամ «3+2» ձեւաչափին ու կաթողիկոսին:

Հ.Ս. Ակնկալութիւնը պիտի ըլլար ինչ որ Տէր-Պետրոսեանը ըսաւ: Ակնկալութիւնը պիտի ըլլար, որ ձեռք մեկնէին եւ իշխանութիւնն ալ իր ձեռքը մեկնէր, ըլլար մերձեցման եւ ձեռք մեկնելու հնարաւորութիւնը եւ միջոցը, որովհետեւ այդ գերագոյն անհրաժեշտութիւն է, անկէ աւելի կարեւոր օրակարգ չի կրնար ըլլալ այստեղ, որովհետեւ եթէ բոլորը կը համախմբուին եւ լուծում կ'որոնեն, խնդիրը բոլորովին այլ ձեւով տեղի կ'ունենայ: Ինչպէս պարոն Տէր-Պետրոսեանը ըսաւ, մենք շատ լուրջ մարտահրաւերի առջեւ ենք եւ շատ ցաւոտ պայմանագիր կնքելու շեմին ենք՝ հասկնալի պատճառներով, պարտուած ենք, չենք կրնար խուսափիլ այդ իրականութենէն: Եւ զարմանալի ուրիշ երեւոյթ մը կը նկատեմ. պարտուած ենք, արդիւնքները չենք ուզեր ընդունիլ, եւ ոչ միայն չենք ուզեր ընդունիլ, այլ աւելի խիստ կեցուածք կ'որդեգրենք մանաւանդ Արցախի հարցին հետ կապուած: Երբ մեր ամենաուժեղ եղած ժամանակ Արցախը չկրցան անկախացնել, չկրցան դուրս բերել Ատրպէյճանի ճիրաններէն, հիմա յանկարծ լուրջուց մը հրապարակ կը բերեն, որ Արցախը չի կրնար Ատրպէյճանի կազմին մէջ ըլլալ: Բոլորիս ցանկութիւնն է, բոլորիս երազն է այդ, բայց ինչքանով կը համապատասխանէ իրականութեան: Նոյնն ալ պայմանագրի հետ կապուած խնդիրներն են, յստակ է որ մենք ուզենք կամ չուզենք, որպէս երկիր Հայաստան:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Տոքթ. Համբիկ Սարաֆեանի Հարցազրոյր Պետրոս Ղազարեանի Հետ

Շարունակուած էջ 7-էն

տանը պիտի ե՛լ Ատրպէյճանի հետ, ե՛լ Թուրքիոյ հետ կանխատեսելի յարաբերութիւններ ունենայ:

Պ.Ղ. Ընդդիմութիւնը կ'ըստ, որ դուք չէք կրնար այդ ընել, դուք գացէք՝ մենք կու գանք կ'ընենք:

Փանթուրքիզմի ազդեցութիւնը, սակայն, չի սահմանափակուիր Կեղրոնական Ասիոյ եւ Հայաստանի վրայ՝ Այս իմաստով ակադեմիկոս Տիմիթրիոս Արիստոպուլոս կը գրէ «Թուրքիոյ ներ-

թափանցումը Լիպիա, ինչպէս նաեւ Սուրիա, անոր յաւակնութիւնները Արեւելեան Միջերկրականի մէջ Յունաստանի եւ Կիպրոսի տնտեսական գոտիներու նկատմամբ նոյնպէս մաս կը կազմեն փանթուրքիզմի քաղաքական օրակարգին»:

Հողերու բռնագրաւումը՝ փանթուրքիզմի յատկանիշ

Թուրքիան ուղղակի ելք չունի դէպի Ատրպէյճան, Կասպից ծով եւ Կեղրոնական Ասիա: Հայաստան կ'ընդմիջէ գայն: Վերջինս տնտեսապէս խեղդելու ակնկալութեամբ թուրքիա եւ Ատրպէյճան խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան (ԽՍՀՄ-ի) լուծարումէն անմիջապէս ետք փակեցին Հայաստանի հետ իրենց սահմանները: Այս շրջափակումը մասամբ օրհնութիւն էր Հայաստանի համար՝ թէեւ ան կ'արգիլէր բեռնափոխադրութիւնը դէպի Հայաստան եւ Հայաստանէն դուրս նշեալ երկիրներուն ճամբով, սակայն, թոյլ չէր տար, որ թուրքիա եւ Ատրպէյճան կործանարար գործունէութիւն ծաւալեն Հայաստանի դէմ:

Վրաստան եւ Իրան ներկայիս կը ծառայեն որպէս թրքական երթուղիներ դէպի Ատրպէյճան եւ անկէ անդին, բայց անոնք կը մնան անուղղակի ճամբաներ: Ներկայիս թուրքիան-Ատրպէյճանին կապող ճամբան Պաքու-Թիֆլիս-ձեյհան (ՊԹձ) քարիւղատարն է: Ան կ'երկարի Կասպից ծովուն մէջ գտնուող Ազերի-Չիրաղ-Կիւնաշլի քարիւղային հանքավայրէն մինչեւ Միջերկրական ծով, կը միացնէ Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուն եւ հարաւարեւելեան Միջերկրականի ափին գտնուող թուրքիոյ ձեյհան նաւահանգիստը՝ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի ճամբով:

2020-ին Ատրպէյճանի թուրքիոյ տնօրինումով յարձակում սանձագերծեց ոչ միայն Արցախի ինքնավար մարզին, այլեւ Հայաստանի վրայ: Թուրքիան այս նախադրական համար տրամադրած էր կառավարման մեքանիզմ, զինամթերք, զօրք, ՏԱՀԵՇ-ի եւ այլ զինեալ ահաբեկիչներ: Ատրպէյճան ստացած էր նաեւ ամերիկեան F-16 եւ իսրայէլեան անօդաչու թռչող սարքեր: Յարձակումներու տեսանելի նպատակը ներխուժելով յաղթելն էր, տիրանալու պատմականօրէն հայկական այն տարածքին, որ կը կոչուի Լեռնային Ղարաբաղ (Արցախ), եւ որուն կարելի չէր տիրանալ բարոյապէս, դիւանագիտութեամբ կամ պատմական բացարձակ փաստերով: Բայց մտադրութիւնը շատ աւելին էր. Ան կը ներառէր Հայաստանի տարածքներու գրաւում, որպէսզի աշխարհագրականօրէն թուրքիան կապէր Ատրպէյճանին՝ Հայաստանի Սիւնիքի մարզին միջոցով, որ ծանօթ է նաեւ որպէս Զանգեզուրի շրջան: Սիւնիքը Հայաստանը կը կապէ Իրանի, Ատրպէյճանի եւ Նախիջեւանի: Վերջինս պատմականօրէն հայկական ներգաւառ (անկլաւ) է, որ այժմ կը գտնուի Ատրպէյճանի տիրապետութեան տակ:

Թուրքիա եւ Ատրպէյճան իրենք զիրենք «Մէկ ազգ, երկու պետութիւն» կը համարեն. Սակայն 2019-ին էրտողան իր իսկական մտադրութիւնը յայտնեց, երբ յայտարարեց թէ. «Այս նպատակին հասնելու հիմնական գործիքը 2009-ին ստեղծուած թրքական խորհուրդն է, որ միացուցած է թրքական աշխարհի բոլոր (բացառութեամբ թուրքմենստանի) ժամանակակից ներկայացուցիչները: Մինչեւ այսօր մենք կ'ըսէինք «Մեկ

Շար.ը էջ 19



ԹԷՔԷԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ
75-ամեակի Տօնակատարութիւններու Ծարք
ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ
 Նուիրում՝
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆԻՆ, ԳԵՐՄԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆԻՆ,
ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻՆ ԵՒ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆԻՆ






Տեղի կ'ունենայ՝
ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 30, 2022
 Երեկոյեան ժամը 5:00-ին
 ԹՄՄԻ Պէշկեօփուրեան Կեդրոն
 1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

Մուտքը Ազատ

Հիւրասիրութիւն

Խմբըլին Սեկն Է, Վազ Անցեք... (Պատմուածք՝ Փոքր Ինչ Երգիծական Գրիչով)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Շուռ արի մէջքդ քսեմ,- լոգարանի դուռը բացելուն պէս ասաց կինս՝ Մարիետան:

- Աղջիկ ջան, երկու օր առաջ ես մէջքս տրորել, էսօր էլ անցիր հակառակ կողմը, դռն-մոռ (կուրծք) եւ այլն..., ինչ վատ է որ...:

- Լսիր, պարոնս, չափդ ճանաչիր, սպասիր, սպասիր, բջջալինդ է, գնամ նայեմ ով է:

Մարիետայի հեռանալուց յետոյ, փորձեցի նստել ալիւմինէ բաւականին հնամաշ աթոռակին, որը իմ ծանրութեան տակ մէկ էլ ձողուեց ու չորս ոտքերը ծռուեցին տարբեր կողմեր եւ ես տապալուեցի սալալատակին:

- Մարջան, Մարջան հասիր, ընկե՛լ եմ,- ահեղագոչ ձայնով բղակեցի ես:

Բջջային, հեռաձայն, գանգամանգ մի կողմ թողած, Մարիետան հասաւ օգնութեան: Նոյն միջոցին դրան գանգ ու բռնուցքի հարուածներ դրանք:

- Մարջան, ես լաւ եմ, հաւանաբար մեր դրացիներն են, ծորակները փակիր ու գնայ նրանց մօտ եւ հանգստացրու, ասա, որ ամէն ինչ լաւ է եւ օգնութեան պէտք չկայ:

- Վա՛յ, քոռանամ ես, էս ի՞նչ օրն ես ընկել տղայ ջան, -դրացիներին հանգստացնելուց յետոյ ասաց լոգարան վերադարձած տիկինս:

- Հօ որեւէ ցաւ-բան, կոտորուածք չունե՞ս

- Չէ՛, ոչ, նստած տեղս հանգիստ տապալուեցի գետնին: Հիմա փորձիր ինձ ոտքի կանգնեցնել, որովհետեւ որքան ինքս փորձում եմ գոյգ ծորակներից կախուելով ոտքի կանգնել՝ ոչինչ չի ստացուում, ոտքերս սահում են:

Խեղճ Մարիետա, ամէն ջանք գործադրում է ինձ դուրս բերելու համար՝ անօգուտ աշխատանք: Մի պահ դադարեցնում ենք անիմաստ չարչարանքը ու դէմ դիմաց նստած գետնին, ողորմելի, խեղճացած վիճակով նայում ենք իրար աչքերի մէջ: Ես, ոչ թէ ծիծաղելի, աւելի շուտ ողբալի վիճակի մէջ եմ: Ո՞րքան կարելի է, թէկուզեւ նա կինդ լինի, աղպէս, մօրից մերկ ծնուածի պէս, նստել նրա առջեւ: Տղամարդու արժանապատուութիւնը ինձ ստիպում է ձեռքերս ծնկներին արանքում պահել:

- Հեն ջան ես գտայ, արի տրուսիկ (հայերեն՝ վարտիկ) հագցնեմ, գնամ հարեւաններից մի երկուսին բերեմ, որպէսզի քեզ դուրս հանենք այս բանտախցից:

- Ոչ մի դէպքում: Ես որոշեցի անելիքս: Թէեւ ես սովետական բանակում փորսուղ (փորի վրայով գետնի վրայ սողալ) չեմ սովորել, բայց հիմա կը փորձեմ:

- Վա՛յ, Հեն ջան, արեւիդ մեռնեմ, ինչ լա՛ւ, ինչո՞ւ շուտ չէիր մտածել: Մինչեւ դու սողաս՝ ես գնամ հանուեմ, որ քեզ կրկին լողացնեմ,- ուրախ խնդրեցով ասաց նա:

- Հիմա կամաց-կամաց հագնուիր,- ինձ փառաւոր լողացնելուց յետոյ ասաց նա:

- Էլի՞ կոստիւմ պիտի հագնեմ էս շոգին, հլա ժիւետն էլ հետը:

- Այո՛, պաշտոնական երեկոյ է, ամօթ է, ասել եմ չէ՞ Ֆաստի դերժի (ուսուերէն է՝ ձեւ արա, ձեւ պահիր): Ժիւետն էլ նրա համար, որպէսզի կարողանաս կոստիւմդ

հանել:

Ժամը երեքին Աքսես ընկե-րութեան մեքենան գայու է մեզ սրահ տանելու:

- Ինչո՞ւ այդքան շուտ, չէ՞ որ երեկոն ժամը հինգին է:

- Ալէքսան (մեծ թոռս է) ասաց, որ մեր ուզած ժամին ազատ մեքենայ չկայ: Կայ միայն 3-ին եւ 5-30-ին: Բնական է՝ ես ընտրեցի ժամը 3-ը:

- Բա մենք ի՞նչ ենք անելու երկու ժամ:

- Սրահին յարակից յայտնի փողոցում կը քայլենք, ման կը գանք, կապուչինօ կը խմենք..., ժամանակ է՝ կ'անցնի, մի նեղուիր: Որքան էլ տարօրինակ, մեքենան եկաւ ժամը 3-ից էլ շուտ, տաս վայրկեան մնացած: Ազատուողը դուրս ենք գալիս ու փողոցի աջ կողմով բարձրանում դէպի վեր:

- Վա՛յ, մենք անցանք սրահից, ինչո՞ւ մեզ չ'իջեցրեց, մենք կարող էինք անցնել դիմացի մայթը:

- Աստուած չանի նման քայլ կատարի Նարջան, նոյն վայրկեանին վարորդը կը շարժուի աշխատանքից: Նրա ամէն մի շարժումը հսկողութեան տակ է: Ուստի, նա պարտաւոր է բարձրանալ վեր, առաջին իսկ խաչմերուկից շրջադարձ կատարել ու մեզ իջեցնել հենց սրահի մուտքին: Օրէնքը՝ օրէնք է, եւ այն Ամերիկայում կիրառուում է հնարաւորինս անսայթաք: Ընկեր, բարեկամ չկայ, սխալ ես գործել՝ պատժուիր:

Երկու օր առաջ ենք եղել այս նոյն՝ De Luxe Banquet Hall-ում ու կրտսեր, որ սրահի մուտքը բակի կողմից է: Յարակից՝ Սան Ֆերնանդո փողոց գնալիս, հեռուից ձեռքով ողջունում եմ կայանատեղում աշխատող երիտասարդներին:։

Այդ տապ եղանակին անցուղարձը շատ չէ, օրը կիրակի, աշխատող հասարակութիւնը հանգստի եւ վայելքի վայրերում է:

- Դու նստիր այս ծառի շուքի տակ, տե՛ս, ինչ յարմար, երկարաւուն նստարան է, կոստիւմդ հանիր, դիր կողքդ: Ես գնամ կապուչինօ բերեմ, ասում է Մարիետան

- Լա՛ւ, մի 10-15 րոպէ էլ այդպէս սպանենք, իսկ յետո՞յ

- Յետոյ այն, որ ես կը գնամ Մոլ, իսկ դու քո բջջայինով երաժշտութիւն կը լսես:

Մի քանի վայրկեան անց, աշխուժ գրոցով բռնուած, միջին տարիքի երկու հայ կանայք նկատում են ինձ ու ժպտալուց յետոյ շարունակում քայլել: Հագիւ երկու-երեք քայլ արած, ընդոստ ես են դառնում ու մօտենում ինձ:

- Դուք պարոն Անասեանն էք, այդպէս է, չէ՞,- հարցնում է նրանցից մէկը:

- Այո՛, դուք ճիշդ էք, իսկ դու՞ք ով էք: Ներկայացէք աղջիկներ:

- Մենք հայ նպարատան վաճառողներ ենք: Մի ազատ օր ունենք, եկել ենք Մոլ՝ գնումների: Դուք ինչ էք անում այստեղ, բոլորովին մենակ:

- Ես մենակ չեմ աղջիկս, կինս, ձեզ նման գնացել է Մոլ, իսկ դուք նստէք, նստէք, մի քիչ կը գրուցենք,- կոստիւմս վերցնելով թեւիս, ասացի ես:

- Էս շոգին, կրակին կոստիւմում է պէտք, բա դուք մեղք չէ՞ք,- նրբին ծիծաղով միջամտում է միւս կինը:

- Պարտաւորուած եմ աղջիկս, կողքի փողոցի De Luxe սրահում նշուած է ՆՈՐ ՕՐ շաբաթաթերթի 100-ամեակը: Հրաւիրուած ենք այդ երեկոյին:

- Մասնորո, ամուսինս հալեպահայ է եւ միշտ առաջինը ձեր նիւթերն է կարողում թերթերում եւ ինձ էլ ստիպում է, որպէսզի ամէն մի գնորդի պայուսակում հայկական թերթ դնեմ: Ասում է՝ «Թող սովորեն Մաշտոցեան ուղղապարտութեամբ կարդալ»:

- Այդ մէկը դուրս շատ եկաւ: Բրաւօ իրեն: Ողջունիր նրան իմ կողմից:

Գուցէ այս գրոցը երկար շարունակուէր, եթէ չ'յայտնուէր Մարիետան:

- Օ՛, հիանալի..., , հրաշալի գրուցակիցներ է գտել ամուսինս,- աշխուժօրէն ասաց նա ու ֆիրմային թղթէ տոպրակից հանեց մի գեղեցիկ վերնազգեստ,- չը՛, հաւանում էք աղջիկներ:

- Հոյակապ է տիկին Մարիետա,- ձէն-ձէնի տուած ասացին կանայք ու վեր ելան նստարանից:

- Ուրեմն դուք ինձ էլ գիտէք հա՞...

- Անշուշտ, ո՞վ չգիտի ձեր երաժշտական ընտանիքին,- աշխուժօրէն, միաբերան ար-ձագանգեցին կանայք ու մտերմօրէն հրաժեշտ տալուց յետոյ հեռացան:

- Էս ի՞նչ հաճելի փոթորիկ էր Մարջան, աւելորդ ժամերը գրեթէ անցան: Ես կոտորուեցի առանց ծխելու: Արի գնանք Valet Parking-ի տղաների մօտ, մի քիչ էլ նրանց հետ կը գրուցենք, տղաները Հայաստանից են: Երկու օր առաջ եմ ճշդել:

- Չը՛, տղերք, ո՞նց էք դիմանում էս շոգին, կարո՞ղ եմ ձեզ հետ միասին ծխել,- հագիւ տղաներին մօտեցած, ուրախ-ուրախ ասացի ես

- Ինչի՞ չէ հայրիկ ջան,- ասաց նիհարաւուն երիտասարդը՝ աթոռը գիջելով ինձ:

- Սպասէք, սպասէք տղերք դուք չգիտէք թէ ով է յարգելի տարիքով տղամարդը ու շրջուց իմ կողմը,- դուք կոմպոզիտոր Հենրիկ Անասեանը չէ՞ ք:

- Այո, ես եմ բարեկամս, ո՞րտեղից գիտես ինձ: Դու երկու օր առաջ այստեղ չէիր

- Ճիշդ է, չկայի Մասնորօ ջան, ես դուրսկահար եմ, անուս ենք է, վեց ամիս է, որ ընտանիքիս հետ եկել եմ Հայաստանից: Ես կատարել եմ ձեր Դուրսկի կոնցերտը:

- Բա նոտաները ո՞րտեղից ես ձարել:

- Գէորդ Դաբաղեանն է տուել: Մի կտոր երգեմ, որպէսզի համոզուէք որ չեմ ստում:

Դուրսկահարը անթերի մատուցեց կոնցերտի առաջին մասից մի հատուած:

- Ապրես բարեկամս, յուսամ առիթ կը լինի հանդիպելու, երբ օրերը լաւանան:

...Չարմանալի գուգադիպու-թեամբ մեզ տեղաւորեցին այն նոյն սեղանի շուրջ, որը մեզ էր յատկացուել երկու օր առաջ՝ Վենիսուէլահայերի կազմակերպած երեկոյին:

Ընթրիքից յետոյ, նախքան հանդիսաւոր երեկոյի սկսուելը, դուրս եկայ բակ՝ ծխելու: Ինձնից բացի հագուած-չքուած մի ծխող էլ կար: Վերջինս քիչ հեռուից մօտեցաւ ինձ ու անսպասելի հարց ուղղեց.

Դուք երաժիշտ էք չէ՞...կա-րո՞ղ եմ մի հարց տալ

- Այո, սիրով, ինչո՞ւ չէ:

- Դուք կոմիտասին տեսե՞լ էք...

- Այսինքն ի՞նչպէս թէ տեսել եմ, ո՞ւր պիտի տեսնէի:

- Բա նա Երեւանում չի ապրե՞լ, հենց ա Պանթոնում էլ թաղուած է:

Մի վայրկեան քարացայ, ար-րիւնը սառեց երակներս մէջ, ի՞նչ ասել այս բուլթ ու տգէտ փողկապաւորին:

- Չէ, նա Հայաստանում չի եղել, Փարիզում է մահացել եւ 1936-ին աճիւնը բերել են Հայաստան:

- Ինչպէ՛ս, բա մեր կոնսերվատորիայում դաս չի տուե՞լ:

Արդէն սա չափից դուրս էր..., ցանկութիւն ունեմ այս ոչնչութեանը վար գլորել աստիճաններից, -Հենրիկ քեզ պահիր,- ասում եմ ինքս ինձ

- Տուել է, տուել, ինձ էլ է դաս տուել, ես նրա շնորհիւ եմ երաժիշտ դարձել, իսկ դու , պարոնս, գնա թութուն ցանիր, հղպէս «համ էժան ի, համ բնական ի», - կ'ասէր վանեցիկ:

Ոչինչ չկարողացաւ ասել այդ ողորմելի թշուառականը: Չայրոյթս չփարատուած վերադարձայ սրահ:

- Էս երկար մնացիր, հօ բանման չի եղել, երեսիդ գոյն չկայ:

- Այո, մի քիչ երկարեց Մարջան, տուն գնանք՝ կը պատմեմ, այստեղ հարմար չէ:

...Տուն հասնելուն պէս Մարիետային պատմեցի երաժի մասին:

- Ամա՛ն, ի՞նչ ես էդքան սրտիդ մօտ ընդունում, շատեր նոյնիսկ կոմիտաս անունը չեն լսել: Մայրդ եթէ ողջ լինէր կ'ասէր «Խմբըլին (անճարակ, անկարող, ապուշ) մէկն է եղել, վազ անցիր»:

- Էդ ո՞նց լիչեցիր էդ բառը: Հարիւր տարի չենք լսել այդ բարբառակին գեղեցիկ բառը:

- Հիմա պատմեմ լսիր,- ինձ տանջող մտքերը վանելու համար ասաց Մարիետան

1957-ին, երբ ես արդէն գնում գալիս էի ձեր տուն: Մի օր, ձեր հարեւան երկու Մազթաղ անունով կանայք եւ մայրիկդ, բակում նստած գրուցում էին: Մայրիկդ ասաց, որ սուրճ պատրաստեմ: Խոհանոցի պատուհանից տեսայ, որ էմմա անու-նով հարեւանն է բակ մտնում: Բնական է, չորս բաժակ սուրճ պատրաստեցի: Երբ սրճեփն ու չորս բաժակը դրի սեղանին, ճարպիկ Մազթաղը հարցրեց.

- Ինչո՞ւ չորս բաժակ աղջիկս, էմման ի՞նչ գիտէ սուրճը ինչ է... անանկ չէ՞ էմմա, -ան մեզի պէս ախպար չէ, մարդը՝ ուրիշ, մեզի պէս Ֆրանսայէն է:

- Ճիշդ ա ասում, ես կոֆէ չեմ խմում, ամուսինս՝ Արան ա խմում:

- Նորէն ի՞նչ ուզելու համար եկած էր վերժին,- նոյն Մազթաղն էր հարցնողը:

- Կարելոր չէ ճանրմ, վազ անցիր Մազթաղ, մեղք է կնիկը: Այսօր նորէն ծեծ կերած է ամուսիննէն դրամ ուզած ըլլալուն համար:

- Ճանրմ, ինչո՞ւ մեղք է, խմբըլին (անկարող, անճարակ, ապուշ) մէկն է, թող ոստիկանին դիմէ:

- Դիմած է, աւելի գէշ, աւելցած է ծեծը: Կաշառքով կալանքէն ազատած է: Երեք երեխայ, երեքն ալ՝ անօթի: Խեղճ կինը չի գիտէր որ մէկուն հասնիլ, տեսաք արդէն, նիհարանալէն չոփ կտրած է խեղճը, իսկ ամուսինը փառաւոր կեանք կը

Մայք Յակոբեանի Նկարչական Ցուցահանդեսը



ԳԵՈՐԳ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Կազմակերպութեամբ Թէքէեան Մշակութային Միութեան Փաստինա-Կլէնտէյլ Մասնաճիւղին, տեղի ունեցաւ Մայք Յակոբեանի գիրքի շնորհանդէսը, նկարներու ցուցահանդէսը, հեղինակած բանաստեղծութիւններու եւ յօրինած երաժշտութեան ու երգերու ներկայացումը:

Վերոյիշեալ գեղարուեստական բարձրորակ միջոցառումը տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբեր 9, 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Միութեան Ալթատինայի Պէշկէօթիւրեան Կեդրոնի սրահին մէջ:

Ինչն՞ ընտրեցինք այս թուականը: Նախ՝ որովհետեւ Հոկտեմբերը հռչակուած է "Հայ Մշակութի Ամիս", Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոսին կողմէ: Իսկ երկրորդ՝

դիստեսներուն կողմէ ունկնդրուեցաւ յոտնկայս:

Քերթնեան ապա ճարտարօրէն ներկայացուց "Աչքերիդ Պէս Սիրուն Աչքեր" երաժշտութիւնը, որը խլիջ հանդիսատեսներու խանդավառութիւնը: Պէտք է ըսել որ այս երկու կտորները առաջին անգամ ըլլալով կը հնչէին հայ բեմին վրայ: Անոնց խօսքն ու երաժշտութիւնը կը պատկանի Մայք Յակոբեանին:

"Հայերէն" բանաստեղծութիւնը՝ ասմունքով ներկայացուեցաւ Փաստինայի Պլեռ պետական երկրորդական վարժարանի Հայկական ճեմարանի աշակերտուհիներէն, Արմինէ եւ Նարինէ երկուորեակ քոյրերուն կողմէ: Փոխն ի փոխ՝ անոնք հանդէս եկան, խլիջով հանդիսատեսներու հիացմունքը:



որովհետեւ այս տարի կը զուգադիպի Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադրութեան 75-րդ-ամեակին:

Օրուան հանդիսավարը՝ Գէորգ Քէօշկէրեան, իր բացման խօսքով անդրադարձաւ Թէքէեան Մշակութային Միութեան նպատակին՝ որն է հայապահպանումը օտար այս ափերուն վրայ, եւ որը կարելի կը դառնայ քաջալերելով հայ մամուլը, բարոյապէս եւ նիւթապէս նեցուկ կանգնելով հայ դպրոցին եւ կազմակերպելով մշակութային ձեռնարկներ, ուր ելոյթ կ'ունենան մեր նոր սերունդի գաւակները:

Սփիւռքի մէջ՝ շարունակեց ան, մենք կը դիմարենք հոսանքի վեր ու կը դիմագրաւենք շատ մը խոչընդոտներ, որոնց պէտք է յաղթահարել ամէն գնով եւ այդ կ'ըլլայ միայն ու միայն միասնական ուժերով: Հուսկ ապա, հանդիսավարը ընթացք տուաւ օրուան յայտագրի սահուն գործադրութեան:

Առաջին առթիւ հանդէս եկաւ յայտնի եւ սիրուած արհեստավարժ սրինգահար Սալբի Քերթնեանը: Անոր "Մայր Հայաստան" քայլերգի գեղեցիկ ելոյթը՝ հան-

ԹՄՄ, Փաստինա-Կլէնտէյլ Մասնաճիւղի վարչութեան Փոխ-Ատենապետ Խաչիկ Նահապետեանը հանդէս եկաւ ներկայացնելով "Չկա Մէկը Տեղը Լեցնի" երգը, որու հեղինակն է Մայք Յակոբեանը:

Մայք Յակոբեանի "Ճամբորդութիւն մը՝ Գիծերու, Ձեւերու եւ Գոյներու Ընդմէջէն" գիրքը ներկայացուց Տոքթ. Գրիգոր Սիմոնեանը: Տոքթ. Սիմոնեան շրջանաւարտ է Պէշկէօթի ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն: Ան իր ատամնաբուժական մասնագիտութիւնը ստացած է Լոս Անճելըսի USC համալսարանին մէջ, վկայուելով որպէս Periodontist:

Տոքթ. Սիմոնեան արդարօրէն դիտել տուաւ որ սփիւռքի մէջ՝ շատ քիչ կը պատահի որ արուեստագետ մը գնահատուի իր կենդանութեան: Այսօրուան գնահատանքը բացառաբար չհամընկնի սովորական դարձած՝ "Գնա մեռի, եկուր սիրեմ" ժողովրդական ասոյթին, հետեւցուց սիրելի բանախօսը:

Մայք Յակոբեանի "Գոյնի եւ Ներկի" այս փառատօնը, շարունակեց յարգելի բանախօսը, կ'արտացոլացնէ 50 տարիներու վրայ եր-

Նոր Գիրքեր «Մէկ Ժողովուրդ ու Մէկ Կուսակցութիւն» Հեղինակ՝ Տոքթ. Էտուարտո Տանթ Ասիլեան

Սոյն հրատարակութիւնն առաջին անգամ լոյս տեսած է 2017ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 130-ամեակին առիթով: Գիրքին հեղինակը Տոքթ. Էտուարտո Տանթ Ասիլեան, զայն վերահրատարակած է 2022-ի Մայիսին, Պուէնոս Այրէսի Dunken հրատարակչատան կողմէ:

Շուրջ 370 էջերէ եւ 18 գլուխներէ բաղկացած սոյն պատկերազարդ հատորով, հեղինակը՝ սպանախօս հասարակութեան, համապարբակ կերպով, կը ծանօթացնէ Ս.Դ.Հ.Կ.ի հիմնադիրներն ու անոնց զաղափարախօսութիւնը: Ինչպէս նաեւ՝ կուսակցութեան մղած ազատագրական պայքարի հանգրուանները, ակնաւոր դեկավարները, հայրենանուէր գործիչները, քսան կախաղաններն ու քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Նմանապէս յիշուած են Սարգսրապատի եւ այլ շրջաններու ազատագրական, հերոսամարտերը, Ուուտրօ Ուիլսոնի ծրագիրն ու Հ.Բ.Լ.Մ.ի ազգօգուտ նախաձեռնութիւնը, առաջին խորհրդային շրջանի եւ յետխորհրդային Հայաստանի կարգավիճակները:

Կրնանք անվարան յայտնել որ Տոքթ. Էտուարտո Տանթ Ասիլեանի սոյն հատորը՝ թէեւ նուիրուած է Ս.Դ.Հ.Կ.ի 130 ամեակին (1887-



2017), սակայն այդ աշխատութիւնը՝ կուսակցականի պարունակէն դուրս գալով, օգտակար տեղեկութիւններու բաժիններ ալ աւելցնելով, ձեռով մը մանրապատում մը եղած է աւելի քան մէկ դարուան հայոց պատմութեան:

Հանրամատչելի գնահատելի գործ մըն է եւ միաժամանակ ուսանելի, մասնաւորաբար սպանախօս երկիրներու հայ նորահաս սերունդին համար:

Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

«Իմ Սրտի Խօսքը» (Բանաստեղծութիւններ, Միտքեր եւ Խոհեր) Հեղինակ՝ Ծոյճ Յակոբեան

Երեւանի «Յասոն» հրատարակչատունէն 2022 թուականին լոյս տեսած 120 էջերէ բաղկացած ծորճ Յակոբեանի «Իմ սրտի խօսքը» հատորը կը բաղկանայ երկու մասերէ՝ «Բանաստեղծութիւններ, միտքեր եւ խոհեր»: Գիրքին մէջ որպէս յառաջաբան Հայկ Մարտիրոսեան կ'ըսէ «Ծորճ Յակոբեանը բանաստեղծ չէ: Նա սովորական հայ մարդ է եւ այդքանով իսկ հոգում ունի բանաստեղծական սկիզբ: Պարզ անպաճոյճ գործեր են իմ ընկերոջ գրածները, բայց այնքան անկեղծ, այնքան պարզ են, որ ընթերցողն անպայման կը սիրի դրան...»:

Գիրքի երկու բաժիններու միջեւ անջատող բաժին մը կայ, ուր գետեղուած են հեղինակի ընկերային եւ քաղաքական գործունէութեան առնուած գունաւոր լուսանկեր:

Գալով ծորճ Յակոբեանի միտքերուն եւ խոհերուն՝ ստորեւ կու տանք քանի մը նմոյշներ.


Մտածում եմ՝ ինչ մաղթեմ իմ ազգին...

Համախմբում- Եթէ լինէինք, բա՞ մեր հայր սա՞ կը լինէր:

Արդարութիւն- Հիմա՞ բոլոր թալանչիները եւ մարդասպանները ճաղերի ետեւում կը լինէին:

Կարած տքնաջան աշխատանքի մը արդիւնքը, ուր արուեստագետը կ'անսայ ներքին պահանջքի մը՝ իր զգացումները լաւագոյնս դրսեւորելու պատասաւին վրայ:

Արուեստը, աւելցուց Տոքթ. Սիմոնեան, կը պատկանի թէ ստեղծողին եւ թէ ալ ընկալողին: Յակոբեան՝ նշեց արուեստի վերլուծող մեկնաբան դասախօսը, ինքնուրոյն



Հայրենասիրութիւն- Երկիրը մինչեւ վերջ չէինք թալանի:

Համերաշխութիւն- Այդպէս լինէր՝ մենք հիմա կ'ապրէինք ուրիշ Հայաստանում:

Համբերութիւն- Այդ մէկը՝ մեր ազգը ունի: Նստած սպասում ենք՝ ո՞վ է մեզ օգնելու, որ մեր հարցերը լուծենք, առանց հասկանալու, որ՝ առաջին հերթին, մենք պէտք է ինքներս լուծենք, «Եղունգ ունես, գլուխդ քորի»:

Նկարիչ մըն է որ ազդուած է աշխարհահռչակ նկարիչներ Vincent Van Gogh-էն, Henri Matisse-էն եւ Paul Gauguin-էն: Իսկ ոմանք ալ, շարունակեց յարգելի բժիշկը, իր պատասաւներու վառ գոյներուն մէջ կը տեսնեն Սարեանը:

Գեղարուեստական յայտագի-

Վատիկանի Բ. ժողովի Բացման 60-ամեայ Յորելեան



2022 թ. Հոկտեմբեր 11-ի երեկոյեան Սբ. Պետրոս տաճարին մէջ, հանդիսաւոր արարողութեամբ եւ Հռոմի Քահանայապետ Ֆրանսիսկոս Պապի նախագահութեամբ յիշատակուեցաւ Յովհաննէս ԻԳ. (XXIII-րդ) Պապի կողմէ, 1962 թուականի Հոկտեմբերի 11-ին, Վատիկանի Բ. ժողովի բացումը: Միջոցառման ներկայ էր նաեւ Սբ. Աթոռի մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանը:

Իր ընդարձակ քարոզի մէջ Հռոմի Պապը կոչ ըրաւ վերագտնելու Վատիկանի Բ. ժողովի էութիւնն ու իմաստը: Ան վերջիչելով երջանկայիշատակ Յովհաննէս Պապի բացման արարողութեան առթիւ արտասանած խօսքերը՝ այն ուրախութեան մասին, որ պէտք է բնակուի Եկեղեցւոյ մէջ, Ֆրանսիսկոս Պապը վերահաստատեց, որ Եկեղեցին «եթէ

Կաթոլիկ Եկեղեցւոյ Վատիկանի Բ. ժողովը սկիզբ առած էր Հռոմի Յովհաննէս ԻԳ. Պապի գահակալութեան վերջին տարին եւ աւարտած՝ 1965 թ. Դեկտեմբերի 8-ին, Պօղոս Զ. (VI-րդ) Պապի օրով:

1963 թուականին Պօղոս Զ. Պապի հրաւերով՝ Վատիկանի Բ. ժողովին մասնակցած են երկուքական ներկայացուցիչ՝ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւններէն:

Վատիկանի Բ. ժողովի ընթացքին հաստատուած է շարք մը կարեւոր փաստաթուղթեր, ինչպէս նաեւ տարբեր Քրիստոնէական դաւանանքներու միասնութեան մասին Unitatis Redintegratio հրամանագիրը: Վերջինիս մէջ ընդունուած հիմնակէտերու եւ որոշումներու շնորհիւ նոր էջ կը բացուի միջ-եկեղեցական յարաբերութիւններու մէջ, որոնք այնուհետ լրիւ նոր զարգացում եւ



Հռոմի Պօղոս Զ. Պապի եւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը, Վատիկան 1970

չ'ուրախանար եւ կ'ուրանայ ինքզինք, որովհետեւ կը մոռնայ այս սէրը, որ զինք ստեղծեց», ապա շարունակեց. «Յիսուսին սիրահարուած եկեղեցին ժամանակ չունի բախումներու, թունաւորումներու եւ հակասութիւններու համար: Աստուած ազատէ մեզ քննադատական եւ անհանդուրժող, կոպիտ եւ գայրացած ըլլալէ: Քանի որ, ով կը սիրէ՝ ինչպէս կը սորվեցնէ Պօղոս առաքեալը, ամէն ինչ կ'ընէ առանց տրտնջալու: Տէ՛ր, սորվեցո՛ւր մեզի քու վեհ հայեացքը, որ Եկեղեցւոյ նայինք այնպէս, ինչպէս Դուն գայն կը տեսնես»:

Քարոզի աւարտին Սրբազան Քահանայապետը շնորհակալութեան խօսք ուղղեց արարողութեան մասնակցող Քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներուն, ապա փառաբանութիւն մատուցեց Աստուծոյ՝ ժողովի պարգեւի համար:

որակ կը ստանան: Ատոր ապացոյցը կ'ըլլայ 1970 թ. Մայիսի 8-էն 12-ը Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Վատիկան՝ Երուսաղէմի Պատրիարք Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի եւ Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Շնորհք Արք. Գալուստեանի ուղեկցութեամբ: Պատմական այդ այցի աւարտին կը ստորագրուի Համատեղ Յայտարարութիւն:

Այդ յայտարարութեան մէջ երկու գահակալները կը հրաւիրեն բոլոր քրիստոնէաները, յատկապէս Կաթոլիկ եւ Հայ Առաքելական Եկեղեցիներու հետեւորդները, աւելի մեծ հաւատարմութեամբ արձագանգելու Սուրբ Հոգիի կոչին, յորդորելով աւելի խոր միասնութեան, այդպիսով կարեւորելով Փրկիչի կամքը եւ արդիւնաւէտ դարձնելով քրիստոնէաներու կողմէ աշխարհին ծառայելը:

Ձամիլա Աֆղանին՝ 2022 Թ. «Օրորա» Մրցանակի Դափնեկիր



«Օրորա» համաշխարհային մարդասիրական ամենամեայ եօթերորդ մրցանակը շնորհուել է մանկավարժ, իրաւապաշտպան, «Նուռ» կրթութեան եւ կարողութիւնների զարգացման կազմակերպութեան (NECDO) հիմնադիր Ջամիլա Աֆղանինին, որն իր կեանքի 25 տարին նուիրել է Աֆղանիստանի կանանց կրթութեան հնարաւորութիւն տալու գործին:

Դափնեկրի մեծարանքի միջոցառումները, որոնք կրում էին բարեգործական բնույթ, անցկացուեցին իտալիայի Վենետիկ քաղաքում Հոկտեմբերի 14-16-ը: Մինչեւ 2021 թ. Օգոստոսը «Նուռ» կրթութեան եւ կարողութիւնների զարգացման կազմակերպութիւնն ունէր աւելի քան 100.000 կին շահաւոր, որոնք ընդգրկուած էին գրագիտութեան ծրագրերում: Եւ սա՛ շնորհիւ բազմաթիւ համայնքներում ստեղծուած փոքր կեդրոնների, որոնք ղեկավարում էին հենց կանայք: Կազմակերպութիւնը նաեւ իրաւաբանական օգնութիւն եւ սոցիալ-հոգեբանական աջակցութիւն է տրամադրում աւելի քան 10.000 կնոջ, որոնք բռնութեան են ենթարկուել ընտանիքի անդամի կամ գուզնկերոջ կողմից: Ստիպուած լինելով փախչել Աֆղանիստանից՝ Ջամիլան շարունակում է օգնել միւսներին՝ անկախ հեռաւորութիւնից:

Երբ թալիբները գաւթեցին իշխանութիւնը երկրում, Ջամիլա Աֆղանին ստիպուած էր լքել հայրենիքը, բայց նա երբեք չի հրաժարուել իր հայրենակիցներից: Այսօր էլ նրա կազմակերպութիւնը շարունակում է աջակցել Աֆղանիստանի կանանց եւ խոցելի ընտանիքներին՝ լոյս սփռելով կրթութեան անհասանելիութեան, ընտանեկան բռնութեան եւ այլ ժամանակակից խնդիրների վրայ, որոնց այսօր բախուած են կանայք: Միաժամանակ այն ֆինանսական օգնութիւն է տրամադրում իրաւապաշտպաններին, լրագրողներին եւ փաստաբաններին:

«Օրորայի» առաքելութիւնն է ճանաչման եւ մեծարանքի արժանացնել Ջամիլա Աֆղանինի նման մարդասէրների աշխատանքը եւ այն ներկայացնել աշխարհին: Մերօրեայ այս հերոսները ոգեշնչում ու առաջնորդում են մեզ եւ ցոյց տալիս, թէ ինչպէս դիմակայել ճնշող թուացող մարտահրաւերներին: Նրանք մեզ յիշեցնում են համընդհանուր մարդկայնութեան մասին եւ քաջալերում՝ նոյն նուիրումով ծառայելու աղքատներին եւ լուսանցքում յայտնուած մարդկանց: Նրանք նաեւ յիշեցնում են մեզ բոլորիս հաւասար հնարաւորութիւն տալու՝ մեր պարտաւորութեան մասին», - ասաց «Օրորա»

մրցանակի Ընտրող յանձնաժողովի նախագահ, Լոնտոնի կայսերական քոլեճի Կլոպալ առողջապահական նորարարութիւնների ինստիտուտի համադեկավար Լորդ Արա Դարգին:

Ամէն տարի «Օրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը շնորհում է «Աւորո» մրցանակը՝ Հայոց ցեղասպանութիւնը վերապրողների անունից՝ ի երախտագիտութիւն նրանց փրկողների: Դափնեկիրն ստանում է 1.000.000 ԱՄՆ տոլար պարգեւ եւ հնարաւորութիւն՝ շարունակելու նուիրատուութեան շղթան՝ աջակցելով կազմակերպութիւնների, որոնք օգնում են կարիքի մէջ գտնուողներին: Որպէս 2022 թ. «Օրորա» մրցանակի դափնեկիր՝ Ջամիլա Աֆղանին կ'աջակցի Խաղաղութեան եւ ազատութեան կանանց միջազգային լիգային եւ «Նուռ» կրթութեան եւ կարողութիւնների զարգացման կազմակերպութեանը: Խաղաղութեան եւ ազատութեան կանանց միջազգային լիգան իր անդամների կողմից ղեկավարուող միջազգային կազմակերպութիւն է, որը ձգտում է խթանելու համաշխարհային խաղաղութիւն՝ հանդէս գալով յանուն գինաթափման, բռնութեան վերացման, կանանց իրաւունքների եւ զենդերային հաւասարութեան: Իսկ «Նուռ» կրթութեան եւ կարողութիւնների զարգացման հասարակական կազմակերպութիւնը մարդասիրական աջակցութիւն է տրամադրում Աֆղանիստանի կանանց, երիտասարդներին եւ երեխաներին, նրանց ընձեռում զարգացման հնարաւորութիւն:

«Իմ մասնագիտական փորձից գիտեմ, որ մարդու իրաւունքների պաշտպանութիւնը պայքար է: Մենք անցնում ենք այս փուլերով, եւ սա դրանցից մէկն է, երբ այդքան էլ պարզ չէ, թէ ինչպիսին պէտք է լինեն մի շարք հարցերի շուրջ մեր յետագայ քայլերը, յատկապէս՝ երբ ժամանակը պարզապէս չի հերիքում: Ջամիլա Աֆղանինի նման մարդիկ յոյսի լոյս են վառում ապագայի համար եւ մեզ բոլորիս ելք ցոյց տալիս խաւարից», - նշեց «Օրորա» մրցանակի Ընտրող յանձնաժողովի անդամ, Իռլանտայի նախկին նախագահ եւ ՄԱԿ-ի մարդու իրաւունքների հարցերով նախկին գերագոյն յանձնակատար Մերի Ռոբինսոնը:

Ստեղծումից ի վեր «Օրորա» մրցանակը բարեփոխել է հակամարտութիւնների, հալածանքների եւ մարդու իրաւունքների այլ խախտումները հետեւանքով տուժած աւելի քան 1.000.000 մարդու կեանք՝ ուշադրութեան կեդրոնում պահելով երեխաներին, տեղահանուածներին, կանանց եւ աղջիկներին:

Քահանայական Ձեռնադրութեան Եւ Օծման 30ամեակի Տօնակատարութիւն Ի Պատիւ Արժն. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեանի



Կիրակի, Հոկտեմբեր 9, 2022ին, տօնական օր մը ապրեցաւ Արեւմտեան Թեմի վէն Նայս քաղաքի Սբ. Պետրոս Եկեղեցին: Առիթը՝ Եկեղեցւոյ ժրջան Հովիւին՝ Արժն. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեանի Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման 30ամեակն էր: Սուրբ Պատարագ մատուց ինքը՝ Յոբելարը, ներկայութեամբ Արեւմտեան Թեմի Սրբազան Առաջնորդ՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեանի, Գերշն. Վաչէ Արք. Յովսէփեանի (Ձեռնադրիչը Յոբելարին), Արեւելեան Թեմէն հիւրաբար ժամանած Արժն. Տ. Մարտիրոս Ա. Քհնյ. Չեւեանի եւ Հոգն. Տ. Վրդ. Եարտըմեանի: Հաւատարմութեամբ հոծ բազմութիւն մը մասնակցեցաւ արարողութեան եւ օրուան ներշնչող ուրախութեան: Ներկայ էին նաեւ Տէր Հօր ընտանիքի անմիջական հարազատները, մօտիկ բարեկամեր եւ ծանօթներ:

Սբ. Պատարագի «Հայր մեր»-էն առաջ, «Ուրախ լեր» շարականի երգեցողութենէն ետք, Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեան, հանգամանալից արտայայտութիւններով ներկայացուց օրուան Յոբելարը՝ դրուատելով անոր 30 տարիներու եկեղեցական եւ հովուական բացառիկ ծառայութիւնը: «Արժն. Տէր Հայրը, աւելցուց Գերշնորդ Առաջնորդը, իր Քահանայական կոչումով ու հովուական բացառիկ առաքելութեամբ միշտ վայելած է ժողովուրդին անվերապահ սէրը: Ան եղած է միշտ սիրուած, գնահատուած ու յարգուած Հոգեւորական մը»: Այս ուրախ առիթով, գնահատելով Տէր Հօր եկեղեցական նուիրումը եւ աշխատանքը, Առաջնորդ Սրբազանը անոր նուիրեց գեղեցիկ Լանջախաչ մը եւ Երէցկոյն Սբ. Կրօնական յուշանուէր մը, որ միշտ թեւ ու թիկունք եղած է Տէր Հօր: Հաւատարմութեամբ երկար ծախող շնորհներով իրենց խնդակցութիւնը յայտնեցին Եկեղեցւոյ սիրուած Հոգեւոր Հովիւին: Խօսք առնելով Յոբելար Արժն. Տ. Շնորհքը, նախ շնորհակալական իր սրտաբուխ խօսքերը յղեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Սրբազանին՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեանին եւ ապա անցաւ իր օրուան Պատգամին՝ Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:

Սբ. Պատարագէն անմիջապէս ետք, Եկեղեցւոյ մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յարգանքի ճաշկերպութիւն մը՝ յատուկ յայտագիրով: Կը տիրէր բարձր ուրախութեան ընդհանուր մթնոլորտ մը: Օրուան յայտագիրի խօսնակն էր Արեւմտեան Թեմի Թեմական Խորհուրդի

Ատենապետ՝ Տիար Տերիկ Ղուկասեան: Շուրջ երեք հարիւր հաւատացեալներ մասնակցեցան պաշտօնական ճաշկերպին, որու ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը՝ նուագով, երգերով եւ զանազան ելուցներով: Առաջին հերթին՝ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Պարգեւ Համալեան, հակիրճ խօսքերով ներկայացուց Ծխական Խորհուրդին գնահատանքը՝ Հոգեւոր Հովիւին ներկայացնելով արժանի յուշանուէր մը: Ապա խօսք առաւ Հոգն. Տ. Վրդ. Եարտըմեան, որ մօտէն ծանօթ ըլլալով օրուան Յոբելարին, յատուկ գնահատանքով արտայայտուեցաւ անոր մարդկային, եկեղեցական եւ հովուական ճիրքերուն եւ հոգեւոր եւ քահանայական ծառայութիւններու մասին:

Ճաշկերպութիւն մասնակցեցաւ Արեւելեան Թեմի նախկին Առաջնորդ (Նիւ Եորքէն)՝ Գերշն. Դանիէլ Եպս. Ֆրնտոգեան, որ Յոբելարին դասընկեր եղած է Նիւ Եորքի Սբ. Ներսէս Ընծայարանէն ներս: Ան մեծապէս գնահատեց Տ. Շնորհքին եւ ընդհանրապէս Քահանաներու ծառայական նուիրումը մեր Եկեղեցւոյ եւ անոր հաւատացեալներուն հանդէպ: Խօսք առաւ նաեւ Արժն. Տ. Մարտիրոս, որ ներկայիս Տեսուչն է Նիւ Եորքի Սբ. Ներսէս Ընծայարանին, ընդգծելով օրուան Յոբելարին մարդկային, ընկերային եւ եկեղեցականի բարեմասնութիւնները. անոր մաղթեց քաջաբողջ եւ արդիւնաւոր ծառայութիւն Եկեղեցւոյ հաւատացեալներու հոգեւոր օգուտին համար:

Բնականաբար, խօսք առաւ նաեւ Յոբելարը՝ Արժն. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեանը: Իր 30ամեակի այս ուրախ տօնակատարութիւնը կազմակերպողներուն յայտնեց իր գգացում շնորհակալութիւնը՝ երախտագիտական իր խօսքերուն միախառնելով անցեալի ուրախ եւ զուարճալի դրուագներ: Յայտագիրի աւարտին, Թեմի Առաջնորդ՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեան անգամ մը եւս անդրադառնալով Յոբելարի անձին եւ առաքելութեան բարեմասնութիւններուն, իր գնահատական խօսքերու աւարտին Աստուծոյ բարձր օրհնութիւնը հրաւիրեց Յոբելարին եւ անոր հարազատներուն, ինչպէս նաեւ Սբ. Պետրոս Եկեղեցւոյ բոլոր հաւատացեալներուն վրայ: Այս տօնակատարութեան աւարտով, եղան որոշ նուիրատուութիւններ Սբ. Պետրոս Եկեղեցւոյ զանազան ծրագրերներու յաջողութեան նպատակով:

Յիւրիխում Գործարկուել է Շուեյցարիայի Առաջին Թումօ Կեդրոնը



Թումօյի միջազգային կեդրոնների ցանցը համալրուել է եւս մէկով. օրերս իր դռները բացեց Յիւրիխի Թումօ կեդրոնը:

Թումօյի եւ "Creative Technologies Lab" թումային կրթութեամբ զբաղուող շուեյցարական նախագծի հետ համագործակցութեան արդիւնքում բացուած կեդրոնը անվճար հիմունքներով կը մատուցի Թումօյի կրթական ծրագրերը ծուղղութեամբ՝ ուրբոտաշինութիւն, անիմացիա, խաղերի ստեղծում, ծրագրաւորում, երաժշտութիւն, ֆիլմերի ստեղծում, 3D մոտելաւորում եւ զրաֆիկական դիզայն:

Ծրագրերը կը գործի գերմաներէն, յետագայում նաեւ ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով: Սկզբնական շրջանում Յիւրիխի Թումօն կ'ունենայ 700 ուսանող, սակայն շուեյցարացի գործընկերները արդէն իսկ նախատեսում են կեդրոնի ընդլայնումը: Ծրագրերը կ'ընդլայնուի ոչ միայն Յիւրիխում, այլեւ Շուեյցարիայի այլ քաղաքներում. մշակման ընթացքում է երկրում մի քանի Թումօ կեդրոններ եւ տուփեր տեղադրելու նախագիծը:

Թումօյի կրթական ծրագրերը արդէն գործում է Պեռլինում, Փարիզում եւ Լիոնում, Մոսկուայում, Տիւրինում, Քիւնոնում, մօտ ապագայում նոր կեդրոններ է նախատեսուած հիմնադրել Լոս Անճելոսում, Ֆրանկֆուրտում, Կոնստանցում եւ այլ քաղաքներում:

Թումօ ստեղծարար տեխնոլոգիաների կեդրոնն անվճար կրթական ծրագիր է տեխնոլոգիաների եւ դիզայնի միջակայքում: 12-18 տարեկան պատանիների համար նախատեսուած ծրագրերը բաղկացած է ինքնուսուցման վարժանքներից, դասընթացներից եւ աշխատարաններից: Կրթական ծրագիրն ունի 14 հիմնական ոլորտ՝ ուրբոտաշինութիւնից մինչեւ ծրագրաւորում, ֆիլմերի ստեղծումից մինչեւ երաժշտութիւն:

Թումօյում ուսանողները ստանում են հմտութիւններ եւ գործիքներ՝ ուղղուած նրանց զարգացմանը եւ մրցունակութեանը:

Խմբըլից Մէկն է, Վագ Անցեք...

Շարունակուած էջ 15-էն

վարէ, լաւ դրամ կը շահի: Իրեն համար մասնաւոր ուտելիքներ կը գնէ եւ փակի տակ կը պահէ: Կերած ատենն ալ սենեակին դուռը կը բացէ, որ տնեցիկ չտեսնան:

Մի քանի տարի անց Արան անբուժելի հիւանդութեամբ ընկաւ անկողին եւ միայնակ, ցաւերի մէջ, երկար տառապելուց յետոյ մահացաւ: Յուղարկաւորութիւն չ'եղաւ Արդէն մեծահարուստ դարձած էմման մարդ վարձեց, որը

յանգուցեալին թաղել տուեց անյայտ մեռելների գերեզմանոցում: Միանգամայն ճիշդ որոշում:

Անճանաչելի էր դարձէ էմման, հետք անգամ չկար ԽՄԲԸԼ կնոջից: Երեխաներն էլ կոկիկ հագնուած, մարմնեղ՝ ուշադրութեան էին արժանանում ժողովրդի կողմից:

Տարիներ անց, արդէն հասակ առած աղջիկներն առած, էմման չուեց Ֆրանսիա՝ անփառունակ, վարկաբեկուած ամուսնու՝ Արայի հարազատների մօտ:

Մայք Յակոբեանի

Շարունակուած էջ 16-էն

ըը շարունակուեցաւ հետեւեալ կարգով: Հայկական ձեմարանի ուսանողուի էլէն վարդանեան ապրումով արտասանեց Յակոբեանի "Մօրս Աչքերում Ես Տեսել Եմ" բանաստեղծութիւնը: Ապա Սալբի Քերթոնեան սրինգի վրայ հեզասահ կերպով նուագեց Յակոբեանի "Թող Միշտ Ծագիլի" երաժշտութիւնը: Իսկ Խաչիկ Նահապետեան ինքզինք գերազանցեց՝ կատարելով "Ինչ Ես Անում Այս Տեղերում" երգը, որը դարձեալ յօրինումն է Յակոբեանի:

Կերպող յանձնախումբին, զեղարուեստական յայտագրով ելուցի ունեցողներուն եւ ապա հանդիսատեսներուն՝ որոնք իրենց ներկայութեամբ պատուած էին զինք՝ ինքնու եւ համեստ արուեստագէտ մը, ու իր սրտաբուխ ստեղծագործութիւնները:

Մայք Յակոբեան դրուատեց նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի իր ուսուցիչները՝ որոնք կարողացած էին իր մէջ սերմանել ազգային ոգին եւ արուեստի սէրը:

Աւարտին՝ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ արուեստի սիրահարները առիթը ունեցան շաղկապու իրար հետ եւ մանաւանդ իրենց գնահատանքը յայտնելու Մայք Յակոբեանին:

Փանթուրքիզմի Կայսրութեան Յարձակողապաշտ Ձգտումները

Շարունակուած էջ 14-էն

ազգ՝ երկու պետութիւն [պետութեան մէջ]»: Երէկ ես յայտարարեցի, որ մենք դարձած ենք մէկ ազգ 5 պետութիւն [պետութեան մէջ], Աստուծոյ օգնութեամբ մեզ կը միանայ նաեւ Թուրքմենստանը, եւ այսպիսով մենք կը դառնանք մէկ ազգ վեց պետութիւն [պետութեան մէջ]: Մենք տարածաշրջանին մէջ կ'ամրապնդենք միատեղ համագործակցութիւնը»:

Ատրպէյճանի նախագահ Ալի-Եւ նոյնիսկ կը պնդէ, որ Երեւանը (Հայաստանի մայրաքաղաքը), Սեւանայ լիճը եւ հարաւային Հայաստանը կը պատկանին «հին Ատրպէյճանին»: Այս անհեթեթ պնդումը կարելի է հերքել պարզապէս ծանօթանալով քարտէսներուն, այդ կարգին՝ հնագոյններուն: Աշխարհի որչ որչ պատմութեան մէջ, մինչեւ 1918 թուական, Ատրպէյճան անունով երկիր գոյութիւն չէ ունեցած:

Ճեղքել ոչնչացնելով

2020-ի ատրպէյճանական ներխուժումէն ետք, ատրպէյճանական զօրքերը շարունակեցին բռնագրաւել Հայաստանի հարաւային որոշ տարածքներ եւ պատանդներ վերցնել՝ նոյնիսկ կողմերուն միջեւ խաղաղութեան համաձայնագիր ստորագրուելէն ետք:

Խաղաղութեան համաձայնագիրը գնահատող վերլուծաբաններու կարծիքով, Թուրքիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ գոյութիւն ունեցող ճանապարհներու ապաշրջափակումը յատկապէս պիտի ծառայէր մէկ նպատակի՝ ապրանքներու փոխանակումին: Մինչդեռ Թուրքիան եւ Ատրպէյճան մտադիր չեն թոյլատրել Թուրքիոյ ճամբով Հայաստանի անկաշկանդ երեթեակութեան հասանելիութիւնը Եւրոպայ 2021-ին Ատրպէյճանի նախագահ Ալի-Եւ ընդգծեց իրենց քարոզարշաւին փանթուրքական միտումը, երբ ըսաւ. «Ե՛ւ Թուրքիա, ե՛ւ Ատրպէյճան անհրաժեշտ քայլերու կը ձեռնարկեն Չանգեզուրի միջանցքին արդիւնագործման համարգրգ թրքական ամբողջ աշխարհը միացնելու միտումով»:

Փոխադրամիջոցներու կապերը յստակ նպատակի կը ծառայենք Միւս կողմէ, «միջանցքները» կրնան շատ աւելին նշանակել: Հետեւաբար բազմաթիւ այլ պատճառներ կան՝ կասկածով նայելու Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ներթափանցման ծրագրերուն:

2020-ին, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեան դէմ սանձագերծուած պատերազմի ընթացքին, նոյնիսկ անոր յաջորդող շրջանին, Ատրպէյճան գրաւեց ինքնիշխան Հայաստանի տարածքներ, փակեց ճանապարհներ, փորձեց ապօրինի կերպով «մաքսեր» կորզել բեռնատարներէ, որոնք ստիպուեցան վերադառնալ իրենց ապրանքներով:

Ընդամենը օրեր առաջ՝ 13 Սեպտեմբերին, Ատրպէյճան կրկին

յարձակեցաւ Հայաստանի վրայ: Թէեւ Ռուսիոյ միջնորդութեամբ կնքուած գինադադարը «ենթադրաբար ուժի մէջ մտաւ երկու օրանց, սակայն ատրպէյճանական ներխուժումները կը շարունակուին, իսկ Հայաստան կը շարունակէ մնալ միակ՝ առանց որեւէ կողմի ռազմական օգնութեան**»:

Ցեղասպանութիւնը՝ փանթուրքիզմի դրոշմ

Փանթուրքիզմը ինչ-որ ազնիւ, տեսական նպատակ չէ: Ան կը սպառնայ տարածաշրջանային կայունութեան: Ան լուրջ վտանգ է, յարձակողապաշտ եւ տարածուելու ընդունակ: Հետեւաբար Հայոց Ցեղասպանութեան վերսկսման սպառնալիքը ամէնօրեայ իրականութիւն է:

Կովկասը վտանգաւոր դրացիութիւն է. Եթէ արեւմտեան բազմերկը կը ձգտին փանթուրքիզմի միջոցով գսպել Ռուսիան եւ Իրանը, արդեօք կը կարծեն, որ այս նախադրեալը հետագային կարելի է շրջել ըստ իրենց ցանկութեան: Միթէ՞ կարելի է արձակուած ճինը վերադարձնել լապտերին: Անկախ այս բոլորէն, որչ շրջանը կրնայ դժոխքի վերածուիլ, եթէ անխոհեմ դերակատարներ փորձեն փոփոխութեան ենթարկել Իրանի սահմանները: Վերջերս, Իրանի ու Ատրպէյճանը յայտարարեցին Արաքս գետին վրայ, սահմանի մէկ կողմէն միւսը, փոխադրամիջոցներու երթեկութեան կամուրջի կառուցման իրենց մտադրութիւնը, որպէսզի կարելի ըլլայ Ատրպէյճանը Իրանի տարածքով Նախիջևանի արտագաւառին (հիւսիսային) կապել՝ տարանցիկ միջանցքի մը ստեղծման ծրագրին լոյսին տակ: Եթէ նշեալ կամուրջը կարելի կը դարձնէ այդ կապը, ինչո՞ւ անհրաժեշտ է ուրեմն Հայաստանը գրաւել ու միջանցքի պատրուակով անոր սահմաններէն ներս խուժել:

Եթէ պահ մը ենթադրենք որ Հայաստան դուրս եկաւ ՀԱՊԿ-էն (Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութիւն) կամ հրաժարեցաւ առնչուիլ տարածաշրջանային տէրութիւններու՝ Ռուսիոյ կամ Իրանի հետ, այս բոլորը դէպի ծով ելք չունեցող, շրջափակուած Հայաստանը ազգային ինքնասպանութեան պիտի առաջնորդեն անկասկած:

Հայաստան յայտնուած է ցեղասպանական պատմութիւն ունեցող երկու պետութիւններու միջեւ եւ չի վստահիր ԱՄՆ-ի կամ ՆԱԹՕ-ի երաշխաւորութեան: Թէեւ ԱՄՆ-Հայաստան յարաբերութիւնները դարեր շարունակ ջերմ եղած են, սակայն պատմութիւնը ցոյց տուած է, որ Արեւմուտքը լքած է իր «փոքր դաշնակիցը»՝ Հայաստանը, երբ այդ մէկը հրամայական դարձած է: Տակաւին հաւանական է, որ ՆԱԹՕ-ն յորդորէ Թուրքիան եւ Ատրպէյճանը ամբողջութեամբ գրաւելու եւ կլանելու Հայաստանը՝ տարածաշրջանը արեւմտեան ազդեցութեան ոլորտ բերելու նպատակով:

Այսպէս՝ մինչ Արեւմուտքը կը ձգտի սահմանափակել սպառնալիքներու կողմէ բնական կազի եւ պենզինի օգտագործումը, ան միաժամանակ կարելիութիւններ կ'որոնէ այդ նիւթերը ապահովելու այլ լընտրանքային աղբիւրներէ, ինչպէս օրինակ՝ Ատրպէյճանէն, պոչքոթի ենթարկելու ռուսական մատակարարները եւ Իրանական խողովակները: Աշխարհաքաղաքական առումով Ռուսիան եւ Իրանը տապալելու այս փորձը թերի է եւ անհեռատես: Արդեօք Ատրպէյճանն ու Թուրքիան պիտի կարենան փոխարինել Իրանը կամ ռուսական կազը եւ լոկ իրենց միջոցներով մատակարարել Եւրոպան եւ անկէ անդին (բացառելով Իրանի փոխադրման ծառայութիւններու տնտեսական գոտին): Ինչպէ՞ս կարելի է վստահ ըլլալ, որ Թուրքիան եւ Ատրպէյճանը այս միջոցները քաղաքական շահերու խաղաքարտի պիտի չվերածեն: Միթէ՞ չենք յիշեր որ Թուրքիա նման քայլ առաւ, երբ Էրտողան սպառնաց իր պահանջները չբաւարարուելու պարագային սուրիացի փախստականները ազատ արձակել ղէպի Եւրոպա, յիշենք նաեւ Թուրքիոյ ամբարտաւաններ կառուցելու բազմաթիւ ջանքերը, որոնք կը միտէին սովի մատնել իր հակառակորդները:

Եթէ Հայաստան կը մտածէ իր տարածքով տնտեսական փոխադրական շարասիւններու առիթ ընծայել, անհրաժեշտ է որ ռազմական աջակցութիւն ապահովէ՝ առաջը առնելու Տրոյկադայի այն ձիերուն, որոնք կրնան նոր բռնագրաւումներ եւ ցեղասպանութիւններ ի գործ դնել: (Հայաստան ինքզինք իրաւունք պէտք է վերապահէ նաեւ երթեկութեան համար վճարումներ սահմանելու):

Բայց ովքե՞ր պիտի ըլլան Հայաստանի ռազմական պաշտպանները: Ռուսեօրը, իրանցիօն, թուրքեօրը, ազերիօն, ամերիկացիներօրը, ՆԱԹՕ-ն, թէ՛ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերըգգգ:

Ի դէպ, այս բեմագրութիւնը այնքան վտանգաւոր է, որ կրնայ սանձագերծել Համաշխարհային երրորդ պատերազմ մը:

Իրականութեան մէջ, ոչ միայն պատմական տուեալներուն, այլեւ՝ այսօրուան գարգացումներուն լոյսին տակ կարելի է հաստատել, որ ո՛չ Թուրքիան, ոչ ալ Ատրպէյճանը կրնան Հայաստանի հետ ազնիւ բանակցող ըլլալ: Երկուքն ալ կը շարունակեն բացառապէս ոչնչացնել հայկական կեանքի եւ մշակոյթի բոլոր մնացորդները, այդ կարգին՝ խոշտանգելով ռազմագերիներ եւ խաղաղ բնակիչներ, կիրառելով քիմիական արգիւտած գէնք եւ քանդելով իրենց վերահսկողութեան տակ գտնուող եկեղեցիներ, վանքեր, յուշարձաններ ու գերեզմանատուներ:

Այս իսկ պատճառներով, թրքական եւ ատրպէյճանական փոխադրական ճանապարհները պէտք է շարունակեն շրջանցել Հայաստանը: Հայաստան այլեւս պէտք չէ ըլլայ մէկ կողմէ Ռուսիոյ, միւս կողմէ ԱՄՆ-ի ու ՆԱԹՕ-ի քաշքշուկի առարկան: Գործնական եւ

բարոյական հրամայականը փանթուրքիզմին բացառապէս մն է (եւ անոր դէմ դնելը):

Մերժել փանթուրքիզմը՝ յանուն ժողովրդավարութեան, մարդասիրութեան եւ խաղաղութեան

Համաձայն ակադեմիկոս Տիմիթրիոս Արիստոպոլոսի «Հակառակ այն իրողութեան, որ Էրտողանի կառավարման տարիներուն Թուրքիան տեսականօրէն հրաժարած է փանթուրքիստական հետադարձութենէն՝ յօգուտ «նորոսմանիզմի», գործնականօրէն, սակայն, փանթուրքիստական գաղափարախօսութիւնն է որ կը շարունակէ ուղղել Թուրքիոյ աշխարհաքաղաքականութիւնը»:

Աւելին՝ Արիստոպոլոսի կարծիքով «Իսլամ եղբայրներու իր աջակցութենէն եւ Հիւսիսային Սուրիա ներխուժումէն սկսեալ, մինչեւ Լիպիոյ քաղաքացիական պատերազմ, ապօրինի ներգաղթի սպառնալիքներ՝ ուղղուած Յունաստանի եւ Եւրոպայի, տակաւին Արցախի (Լեւոնային Ղարաբաղի) պատերազմ, գուգահեռաբար քիւրտերու հալածանքներգգգ ոչ այլ ինչ են, քան Թուրքիոյ ծաւալապաշտական քաղաքականութեան վերաբերող փանթուրքական ծրագրի օրակարգեր»:

10 Նոյեմբեր 2016-ին, Քեմալ Աթաթուրքի մահուան տարելիցի առիթով, Էրտողան բացառապէս յայտարարեց, որ «Թուրքիան ներկայ իր տարածքէն աւելի մեծ է» գան խօսելով «սրտի սահմաններու» կրօնական իր ուսմունքին մասին հաստատեց «Մենք չենք կրնար բանտարկուիլ 780 հազար քառքլմգ-ի սահմաններուն մէջ, մեր բնական սահմանները կը տարբերին մեր սրտի սահմաններէն: Մուսուլի, Քերքուքի, Հոմսի, Սքոփփէի մէջ ապրող մեր եղբայրները կրնան Թուրքիոյ բնական սահմաններէն անդին ըլլալ, սակայն միշտ կը մնան մեր սրտի սահմաններուն մէջ»:

Մտաւորական վահան Բաբախանեանի խօսքերով. «Թուրքիզմի գաղափարախօսութիւնը ոչ միայն վտանգաւոր է, այլեւ, խորքին մէջ, ցեղասպանութեան մէկ արտայայտութիւնն է»:

«Փանթուրքիզմը կը քողարկուի մշակոյթի եւ կրօնի ծածկոյթի տակ», կ'աւելցնէ Բաբախանեան, «ըստ հոլթեան մնալով սակայն յարձակողապաշտ, ցեղապաշտ ուսմունք՝ օտար հողերու բռնագրաւման եւ «Մեծն Թուրանի» ստեղծման համար»:

* Այս յօդուածի հրատարակումէն ետք տեղեկութիւններ յայտնուեցան գինադադարի միջնորդութեան մէջ ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի դերակատարութեան մասին:

** Նոյն յօդուածի հրատարակումէն ետք Հայաստանին օտարերկրեայ գէնք վաճառելու մասին չհաստատուած լուրեր եւս շրջանառութեան մէջ դրուեցան:

Յօդուածին անգլերէն բնօրինակը հրատարակուած է WND.com-ի մէջ.

Ապաքինման Մաղթանք
Յակոբ Կիւտէշեան շուտափոյթ ապաքինում կը մաղթէ Անգինէ Աջապահեանին, որ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելէ ետք այժմ կը գտնուի բժիշկներու խնամքին տակ եւ կազդուրման շրջան մը կը բոլորէ:
Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

«Լիվերպուլը» Յաղթեց «Մանչեսթր Սիթիին»



Անգլիոյ ֆրեմիեր Լիգայի 11-րդ հանգրուանին փոխախոյան «Լիվերպուլը» իր դաշտին վրայ մրցեցաւ ախոյան «Մանչեսթր Սիթիին» հետ: Նուագագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը:

«Լիվերպուլը» միակ կողմը 76-րդ վայրկեանին նշանակեց եզրագծի յարձակող Մոհամետ Սալահը: Կոլային փոխանցումը կատարեց պրագիլցի դարպասապահ Ալիսոն Պեքերը:

10 խաղէն յետոյ «Մանչեսթր Սիթիին» 23 կէտով երկրորդն է եւ առաջատար «Արսենալէն» ետ է 4 կէտ: «Լիվերպուլը» (9 խաղ) 8-րդն է՝ 13 կէտ:

«Արսենալ» Յաղթեց Եւ Ամրապնդեց Առաջին Տեղը

Անգլիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» հիւրընկալեց «Լիտո Նոնայթսթըին»: Սպանացի Միկել Արտետայի գլխավորած խումբը յաղթեց նուագագոյն արդիւնքով: «Արսենալէն» աչքի ինկած անգլիացի կիսապաշտպան Պուկայօ Սական:

10 խաղէն յետոյ «Արսենալը» 27 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյան «Մանչեսթր Սիթիին»:

«Ռեալը» Պարտութեան Սատնեց «Պարսելոնային»

Սպանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյան «Ռեալը» Մատրիտի մէջ ընդունեց փոխախոյան «Պարսելոնային»: Իտալացի Կառլօ Անչելոտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:



Արքայական խումբի կողմը նշանակեցին ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեման, ուրուգուալցի կիսապաշտպան Ֆետերիքօ Վալվերտէն եւ պրագիլցի յարձակող Ռոտրիկոն: Տարբերութիւնը կրճատեց քաթալոնական խումբի սպանացի յարձակող Ֆերան Թորեսը:

«Ռեալը» 25 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը, «Պարսելոնան» ետ մնաց 3 կէտով եւ երկրորդն է:

«Ունիոն Պելլիսը» 2 Կոլով Յաղթեց «Պորուսիային» Եւ Մնաց Առաջատար

Գերմանիոյի առաջնութեան 10-րդ հանգրուանին «Ունիոն Պելլիսը» սեփական դաշտին վրայ մրցեցաւ Տորթմունտի «Պորուսիայի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Հանդիպման սկզբնամասին երկու կողմի հեղինակ դարձաւ գերմանացի կիսապաշտպան Եանիկ Հապերէրը:

«Ունիոն Բեռլինը» 23 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ֆրայպուրկէն»: «Պորուսիան» 8-րդն է՝ 16 կէտ:

ՊՍԺ-ն Յաղթեց Նեյմարի Կոլին Շնորհիւ

Ֆրանսայի առաջնութեան 11-րդ հանգրուանին ախոյան ՊՍԺ-ն ընդունեց «Մարսելին» եւ յաղթեց 1:0 արդիւնքով:



Ֆրանսացի Քրիստոֆ Կալտիէի գլխավորած խումբի յաղթանակ բերաւ պրագիլցի յարձակող Նեյմարի կողմը: Անոր կոլային փոխանցումը կատարեց ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն:

ՊՍԺ-ն 29 կէտով առաջատար է եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Լորիէնէն»: «Մարսելը» չորրորդն է՝ 23 կէտ:

Բենգեման Տիրացաւ «Ոսկէ Գնդակին»

Աշխարհի լաւագոյն ֆուլպուլիստի «Ոսկէ Գնդակ» մրցանակը տրուեցաւ Սպանիոյ ախոյան եւ Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալի» եւ աշխարհի ախոյան ֆրանսացի հաւաքականի յարձակող Քարիմ Բենզեմանին:



Մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 17-ին, Փարիզի մէջ:

Տարուայ լաւագոյն դարպասապահի մրցանակին արժանացաւ «Ռեալի» եւ Պելլիսայի հաւաքականի խաղցող Տիպօ Կուրտուան:

Լաւագոյն երիտասարդ ֆուլպուլիստ ճանչուեցաւ «Պարսելոնայի» սպանացի կիսապաշտպան Կաւին:

Սալահը Գերազանցեց Ժերարտի Ցուցանիշը

Եզրագծի յարձակող Մոհամետ Սալահը Անգլիոյ ֆրեմիեր Լիգայի մէջ նշանակած կոլերու քանակով «Լիվերպուլը» լաւագոյն ուժարկունեղու ցուցակին մէջ բարձրացաւ երկրորդ տեղ՝ գերազանցելով խումբի նախկին յարձակող, անգլիացի Սթիւըն ժերարտի ցուցանիշը:

Անգլիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին «Մանչեսթր Սիթիին» հետ խաղին անոր նշանակած կոլը 121-րդն էր:

Սթիւըն ժերարտը «Լիվերպուլը» հետ ֆրեմիեր Լիգայի մէջ նշանակած է 120 կոլ: Մրցանիշը կը պատկանի անգլիացի յարձակող Ռոպի Ֆաուլըրն է՝ 128 կոլ:

Գուրգէն Յովհաննիսեանի Չորրորդ Յաղթանակը Պրոֆեսիոնալ Ռինկի Մէջ



Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած պրոֆեսիոնալ բռնցքամարտի մեծ երեկոյի ընթացքին TGB Promotion-ը ներկայացնող հայ բռնցքամարտիկ Գուրգէն Յովհաննիսեանը յաղթանակի հասած է Մայքլ Քոֆիի նկատմամբ, կը հաղորդէ facebook.com/armboxing-ը:

Յովհաննիսեան 7-րդ ուսունտին յաղթած է թեքնիք նոքաութով: Յովհաննիսեան պրոֆեսիոնալ ռինկին մէջ արձանագրեց չորրորդ յաջողակաւ յաղթանակը:

Առաջատար «Նափոլին» Ուժեղ Էր «Պոլոնիայէն»

Իտալիոյի առաջնութեան 10-րդ հանգրուանին «Նափոլին» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Պոլոնիայի» հետ եւ պարտութեան մասնեց գոյն՝ 3:2 արդիւնքով:

«Նափոլի» 26 կէտով առաջին տեղն է եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Աթալանթայէն»: «Պոլոնիան» 17-րդն է՝ 7 կէտ:

Բենգեման Պատրաստ Է Տեղափոխուիլ «Մանչեսթր Եունայթըտ»

Անգլիական «Մանչեսթր Եունայթըտը» հետաքրքրուած է Մատրիտի «Ռեալի» եւ աշխարհի ախոյան ֆրանսացի հաւաքականի յարձակող Քարիմ Բենզեմայի ծառայութիւններով: 34-ամեայ ֆուտթոլիստը պատրաստ է ընդունիլ մանչեսթրեան ակումբի առաջարկը, սակայն անոր համար առաջնահերթ է «Ռեալի» հետ պայմանագրի երկարաձգումը:

Բենզեմայի պայմանագիրը Արքայական ակումբին հետ նախատեսուած է մինչեւ այս մրցաշրջանի աւարտը: Յաջորդ ամրան ան կրնայ անվճար փոխել ակումբը:

Բենզեման 2009 թուականէն հանդէս կու գայ «Ռեալի» մէջ: Ան այս տարի տիրացաւ աշխարհի լաւագոյն ֆուլպուլիստի՝ «Ոսկէ Գնդակ» մրցանակին: